

ᖃ ᑭ ᐱ ᑭ ᐱ ᑭ ᐱ ᑭ ᐱ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՋԱՆ

ፆ፡፡ 41

11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1903

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կրօնք եւ Բարոյական. ՀԱՐՄԱԿ. — Ինքքրյաբըն (Ուղեւորական Տպաւորութիւն) ՎԱՀԱՆ ՄԱՆԷՉԵԱՆ. — Վոսփորեան Նամականքի. ՄԵՆԱՍԷՐ — Ժանեակները. (Բանաստեղծութիւն) ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ. — Կենսագրական. «Տիբացու Կարապետ Պաղտատեան». ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ. — Յուշիք Զայներ. (Բանաստեղծութիւն) Մ. ՈՒՂՈՒՐԼԵԱՆ. — Լիլիեհ Մօրրիս. (Վեպ) Հէնրիֆ Սէն-Քիէվիշ. Թարգմ. ԶիծԺէ-ՍԱՐԱՅ. — Խմբագրական Նօթեր:

Յաջորդ քիւով՝ Բարեբուռ Ուսումնասիրութիւն. ԳՐԻԶԱՆԹԷՄ :—Մտքի Կաթիլներ. ԶԻՅԹԷՍԱՐԱՅ :— Անհրաժեշտ դարմանը (Տեսութիւն մը Արհեստական Կրթութեան վրայ). ԵՐՈՒԱՆԻ ԶԱՎՈՒՇԵԱՆ :

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՍԻՍ Եաբաթաբերքի տարեկան բաժանորդագինն է Կ. Պոլսոյ համար ֆառսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 ֆրանք կամ 5 րոշ: Եւ Թղթաստանական ծախքը հմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրապարակ կ'ելլէ ամէն շաբաթ առտու: Այն բաժանորդները որոնք պակաս քերք ստացած են, պէտք է իսկոյն իմացնեն հմբագրութեան: Ժամանակ անցնելէ վերջ՝ այս տեսակ առարկութիւնները նկատուութեան չեն առնուիր:

Ձի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր :

ՄԱՍԻՍԻ ՎԷԿ Կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշնի պայ-
մաններով :

ՋԵՌՔԷ ԿԸ ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ՔԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ

Հայր

در علیّه غلطه ده (ماسیس) غزته سی اداره سی

• ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Հիւանդութեանց դէմ ապահով է եթէ իր մէջը չի գտնուի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԱԶԱՊԻՐՈՒԹԻՈՒՆ)

Թորախտ, պրոնչիա, հալ, հարբուխ և բարակացաւ, և տղայոց անդամներու թուլութիւն, խոյլ (սրբաճա) և բոլոր արեան աղետներու համար անգին դարման մըն է. Լոպին անգամ տոնուելով բժշկելու կ'ըսկսի և կը շարունակէ: Լմեն տարի հաղարաւոր տղայք մահուանէ ազատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը՝ կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և մարմնոյ կեանք կուտայ: Վեղերու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Սիշտ վրան այս պատկերով վարդադոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիւանդութեան ամբողջութիւնը ընել պէտք է:

20

Բոլոր բեղաճեցման և բեղաճանաչման իւր ծախսը:

“AU TALON D'O” O ԹԱԼՈՆ ՏՕՐ

ԲԱՐԻՋԵԱՆ ԿՕՇԻԿՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ԳԱՌԼՕ ԱԶՆԱՄԵԱՆ

ՀԱՅ ԿՕՇԿԱԿԱՐ

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ

Նաեւ կողերու համար պատրաստուած

Կալաքա, Վոյվոսա փողոց, բիւ 103

Ճաշակաւոր ու վերջին նորաձեւութեան համաձայն կօշիկներու յանձնարարութեան համար, — մանաւանդ չափու վրայ շինուելիք, — կ'արժէ անգամ մը անցելի սոյն վաճառատունը:

ՍԻՐԻՄ

ԱՄՐԱՆ ԱՌԹԻԻ

Կըսեն թէ ամառը որ եւ է սառուցեալ ըմպելի կը գովացնէ, իսկ քիչ կը քրտննէ մարդը:

Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք թէ այդպէս ըսողները կը սխալին:

Գնեցէ՛ք Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ եւ Յ. ԻՍԱ. ԳՈՒԼԵԱՆԻ՝ Ձինաստանէն, Հնդկաստանէն, Ճափանէն եւ Սէյլանէն ուղղակի բերել տուած քարմ, հոսաւեհ եւ առողջարար թէյերէն, համոզուեցէ՛ք մեր ըսածին եւ գովացէ՛ք ամառուան տաք օրերուն:

Միշտ ուշադրութիւն մեր վաճառանիչին:

Կ. Պոլիս, Պահճէ Գափու, Ճէլալ պէյ իւան, թիւ 10:

Մասնաձեւեր թուրքիոյ գլխաւոր քաղաքներուն մէջ, նոյնպէս Եգիպտոս:



Կ. Պոլսոյ մէջ՝ Մասիսի հին թիւերէն գնելու պէտք ունեցողները կրնան զխմել կամ մուրջին զլուխը լրագրավաճառ Միսաք աղային:

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ,

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵԱՆՔԻ ԴԷՄ

Ապահովագրական այս ընկերութիւնը, որ հաստատուած է ու կը գործէ Ֆրանս. Կառավարութեան ֆոնդային ներքեւ, երաշխաւորեալ գրամագուլտ ունի՝ հրդեհի ճիւղին համար 56,000,000 ֆր. եւ կեանքի ճիւղին համար 36,000,000 ֆր.:

ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ մէկն է Եւրոպայի ամէնէն պատուաւոր եւ ամէնէն վստահելի ապահովագրական մեծ ընկերութիւններէն, եւ ուր որ մասնաճիւղ հաստատուած է՝ միշտ գոհ ձգած է իր բոլոր յաճախորդները, իր կատարեալ ուղղամտութեամբ եւ կանոնաւոր գործառնութիւններով:

Այս վաղեմի ընկերութիւնը մեծ վարկ կը վայելէ ամէն կողմ. եւ իր գործառնութեանց ու վստահելիութեան վրայ գաղափար մը տալու համար թուենք մէկ քանիսն այն հանրածանօթ հաստատութիւններէն, որոնք ապահովագրուած են ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍի:

Ֆրանսայի նահանգներու եւ գաւառներու կարգ մը պաշտօնատնտեսներէն զատ, Բարիզի՝ Օբէրա, Վոտվիլ, Նուվօթէ, Ամպիլիւ, Ֆրիլ-Տրամաթիք եւայլն թափոնները, նաեւ Պոստոյի, Թուլուզի, Լիոնի, Մարսիլիայի, Նանդի, Նիսի, Ալճէրիոյ, Բուէնի, եւ ուրիշ տեղերու մեծ թափոնները:

Պոն Մարշէն, Լուվրի վաճառատունները, Բիկ Լայիոնը, Բրէնթանի, Պէլ-Ժառտինիէռի, Օթէլ տը Վիլի եւ Սամարիթէնի մեծ վաճառատնոցները:

Թրանսաթիւնիք, Հալը-Մարսիի առեւտրական, Մովային Փոխադրութեանց, Ֆրանսական Թրաւուէյներու, Խնայողական երկաթուղիի ընկերութիւնները:

Մասնաւորապէս ուշադրութեան առնուելիք պարագայ մըն է որ ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ ընկերութիւնը, իր Կաղմական Կանոնագրին հաստատման, պարտաւոր է ամէն վեց ամիսը անգամ մը իւր եւ Բուսկան կացութիւնը երթարկել Ֆրանսայի Առեւտրական Նախարարութեան քննութեանը. նոյնպէս Սէնի քաղաքապետութեան, Բարիզի Առեւտրական Սենեակին եւայլն:

Ընկերութեան գրամատունն է Քրէտի Լիոնէն:

Սոյն ընկերութեան Պոլսոյ կողմէ գործակալութիւնը ստանձնած է մեր հրապարակին վրայ իր պատուաւորութեամբ ծանօթ

ԳԱՌՆԻԿ ԱՃԱՌԵԱՆ

Որուն պէտք է զինել թէ՛ հրդեհի եւ թէ՛ կեանքի ճիւղին վերաբերեալ ապահովագրութեանց կամ տեղեկութեանց համար: Գ. Աճառեան կը վարէ նոյնպէս Compagnie générale d'Assurances Maritimes ծովային ապահովագր. ընկերութեան Պոլսոյ կողմէ գործակալութիւնը:

Հասցէ.— Պոլիս, Մահուտ փաշա, Պէոյիւք Եւլտըղ խաւ, թիւ 14, Լա Դոնֆիանս ապահովագր. ընկ. Դրասենեակը:

Դառնիկ Աճառեան կը վարէ նաեւ, իր անձնական սեփականութիւնը եղող անբիւրք վաճառատուն մը, Պոլիս, Շուկայ, Մուհաֆազաճըլար, թիւ 46, ուր գաւառներէն առուծաբի յանձնարարութիւններ կ'ընդունուին:

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ՖԱՐԻՁ 1828-1829

Հ Ր Դ Ե Հ Ի Ճ Ի Դ Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փեսք	274,000,000	Ֆր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երախաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Դ Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ փեսք	129,000,000	Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաւխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵԻՆԷԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեալ զինեռով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, հրով Իւնիոնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուրքիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բաղուման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՄԱԿԱՐ դուրքեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելի Տօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Բաքրեք Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Ինայէթ Խան: — Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ



ՅՈՎԱԿԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ

(ՄԵՂՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Վարժարանին

Բերա, Մեծ Փաղոց, Թագսիմ, քիւ 61

Զրաճեան աբաղքման

Պալպալեան ամէն օր ահուայի ամէն տե.

սակ հիւանդութիւններով տառապողները կ'ընդունի. իսկ Ուրրաթ, Կիրակի եւ Նրեք չարթի մինչեւ ժամը 5: Դիչերուան ո եւ է ժամուն կարելի է դիմել: Պալպալեան կ'ե. րախաւորէ իր լեցուցած ու չինած ահուաները: Յորեկները ահուայ քաշել տալու հա. մար որոշ վարձք մը չկայ. քաշել տուողին կամքէն կ'ախեալ է:

Աղխանեալն ձեռք

ԱՊԱՌԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

ՀԵՐՃԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՎԵՐՋԻՆ ԳԻՆ



Եթէ կ'ուզէք ամէն տե. սակ գոհարեղէններ ունե. նալ, աժան ու ճաշակաւոր, թէ՛ արեւելեան եւ թէ՛ եւրոպական ճաշակով պատրաստուած, ժամա. ցոյցներ, արծաթեայ գա.ւաղաններ եւայն, դիմե. ցէ՛ք Պոլիս, Ոսկերչաց Շու. կան, Մեծ-փողոց, թիւ 13:

Հարիւրին 20 կանխիկ, մնացեալին համար 100ին 5 չարաթական վճարում: Կանխիկ գնո. ղին համար հարիւրին 5 զեղչ: Դործածուած գոհարեղէնները եթէ վնասուած չեն՝ 100ին 10 զեղչով եւ կ'առնուին. իսկ ապառիկ զը. նողներէն՝ 100ին 15 զեղչով:

ՄԱՍԻՍ

53րդ ՏԱՐԻ, Դ. ՇՐՁԱՆ

ԹԻԻ 41

11 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1903

ԿՐՕՆՔ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Հին ատեն՝ մարդուն ծանոթութիւններու պաշարը շատ պարզ էր և սակաւ։ Չարդացած միտքերը ցանցաւ դէպքերու և տարտամ իրողութիւններու փոքրիկ շրջանակներու վերայ միայն գոհացնելով իրենց հարցասիրութեան ծարաւը, կը յօրինէին իրենց դրութիւններու և տեսութիւններու շէնքը։ Մարդկային կեանքին բարդ երեւոյթներն ալ քանի մը գերակշիռ դրութիւններով իրենց բացատրութիւնը կը գտնէին։

Ոյժերու տմէնէն գերազանցը եղած է կրօնականը, որ երբեմն իրմով տոգորած և իր մէջ համադրած է մարդը իր բովանդակ արտայայտութեամբը։—գրական, գիտական, արուեստական, օրէնսդրական, բարոյական և փիլիսոփայական։ Կրօնական ոգին, որ նախապատմական ստուերներէն կ'երկարածգուի մինչև արդի արեւափառ բարձրութիւնները, կազմած է ընկերական կեանքի վաւարանը։ Կրօնը մաքուր խտէալներով վարած է համայնքներ, տարբեր երկինքներու և կլիմաներու տակ։ Բարոյական ոչ մէկ ոյժ կրցած է իրեն պէս՝ անհուն և լուսաւոր հեռապատկերներ ստեղծել և հնութեան մէջ, յաճախ առանց նկատի առնելու իր հոգեկան արժէքը և բնագանցական բովանդակութիւնը, նա մեծ դրութիւններ երեւան բերած, մարդկային հօկայ ամբողջութիւններ վարած է որուն բարերար արդիւնքներուն հանդէպ, յարգանքով կը վերաբերուին այսօր ընկերաբան փիլիսոփաներն ու գիտունները, ինքզինքնին գտնելով անցեալ փառաւոր իրականութեան մը առջեւ, որ խորապէս ազդած է աշխարհի ճակատագրին վրայ։ Հին աշխարհը առանց կրօնքի անհասկնալի կը մնայ և խաւար կ'երևայ։

Մինչև վերածնութեան շքեղ պայծառութիւնը, կարծես թէ մարդուն մտաւորականութիւնը աստուածաբանութեամբ միայն կը հովանաւորուի՝ իր լայնագոյն առումովը և այլազան ճառագայթումներովը։ Փիլիսոփայութիւնը որ հին ժամանակները գրեթէ գիտութեան միւս սեւերուն համայնքը կը ներկայացնէր, իրմով կը սնանի և կ'ուսճանայ։ Բարի և չար ոգիներով լի էր երկինքն ու մթնոլորտը, լեռները, ծովերը, ստորերկրեայ խորութիւնները և մարդուն երեւակայութիւնը։ Բնութիւնը կրօնականացած էր, թէև բազմաթիւ դարերու սահունով է միայն որ կրօնքը իր ճշմարիտ սեռութեամբը կ'ըմբռնուի և կը տեղաւորուի մարդուն սրտին մէջ։

Քաղաքակրթութեան այժմեան բարձրութեան վրայ, նոր միտքը լայնօրէն մշակուած և ծաղկած իր բոլոր կարողութիւններովը, աւելի ընդարձակ հորիզոններու վրայ կը սաւառնի, և արտաքին աշխարհին հետ՝ մարդուն ներքնաշխարհն ալ խորանալով, մանրահոգ կը պրպտէ, կը վերլուծէ դայն, ու բաղդատական ընկերաբանութեան ճոխ և բազմերանգ շրջանակին մէջ, հոգեբանութեան և հնախօսութեան լոյսով կը ջնայ լուծել ամէն հարց որ կը շահագրգռէ ընկերական կեանքը։ Գիտական վերլուծումին այդ հզօր թափը հետզհետէ կը ծրարէ կրօնին տիրապետական թեւերը, որպէսզի բուն իր կալուածին մէջ—հոգիներու մէջ—ամփոփուի և արդիւնաւորուի այն։

Սակայն մէկէ աւելի գիտուններու հասկարօն տրամադրութիւնը չափազանցութեան միւս ծայրը անցնելով, շատ անգամ կասկածի կ'ենթարկէ կրօնին բարերար ազդեցութիւնը

մարդուն ազնուացման մէջ . և դարաւոր նախապաշարուսներու սխալ վարդապետութիւններու անպէտ՝ քարացած դրութիւն մը նկատելով զայն, կը կապտէ իրմէ այն բարոյական ոյժերը . որոնցմով նա կ'ոգեւորէ կեանքը : Այդ յայտնի գիտուններն այսօր անկախ բարոյականը, կամ գիտութեան վրայ հիմնուած բարոյականը կը ջատագովեն, սա պատճառաբանութեամբ որ եթէ ան կախում ունենայ բնազանցական անսութիւններէ, մարդը կը կորսնցնէ իր արժանապատուութիւնը և պատասխանատուութեան բաժինը : Բարոյականին նպատակը, կ'ըսեն, բոլորովին գործնական է, մինչ գաղափարական է կրօնքինը : Կրօնը կը անուցանէ մեր մէջ հայեցողութեան պէտքը, ամուլ հետաքրքրութիւնը, կամքին փնտսովը կը գրգռէ երեւակայութիւնը : Բարոյականը կը կրթնի ո'չ թէ զգացումի, այլ սկզբունքի մը վրայ :

Պատմական լայն ու խորունկ նայուածք մը սակայն պիտի դուգադրէ կրօնքն ու բարոյականը հաւասար բարձրութեան մը վրայ, ուր անոնք երկուքը ներդաշնակ կը գործակցին իրարու : միեւնոյն նպատակին ուղղուած :

Բարոյագիտութիւնը կը խօսի մարդոց բարքերուն, կիրքերուն և ապրելու կերպերուն վրայ : Բարոյականին տարրը ամէն տեղ երևան կուգայ, կրօնական կամ Պրական, փիլիսոփայական և գիտական ձեւի տակ, բայց նա ո'չ կրօնք մըն է, ոչ գրականութիւն մը, ոչ փիլիսոփայութիւն մը, ոչ գիտութիւն մը . այլ այդ երանգներով արտայայտուելէ առաջ, նա մարդուն մէջ երեւցած է իրրեւ իր կարողութիւններու և բնազդներու մէկ ինքնաբերական արտայայտութիւնը, իրրեւ ընդածին և անհրաժեշտ ձև մը յարաբերական կեանքին :

Մարդուն մէջ մնայուն՝ անեղծ հիմ մը կայ, ըլլայ այն կրօնական կամ բարոյական, որուն վրայ բարեչղութիւնը կը կատարէ իր ձեւափոխութիւնները : Այսպէս, բարոյական պարտականութիւնը, որ է քրիստոսի, իրրեւ տիեզերական օրէնք, պարտաւորիչ է ամէն

անհատի, և իրրեւ մարդկային գիտակցութեան մէկ բաղկացուցիչ մասը՝ անփոփոխ է . բայց բարոյականին գիտութիւնը որ կ'ուզէ սահմանել բարիին բնութիւնը թէ ի՞նչ է բարիք, փոփոխական է միշտ : Վասնզի, բարոյականին ըմբռնումը եւ կիրարկութիւնը ինչ ինչ տեսակէտներով կը տարբերին ժամանակէ ժամանակ, ցեղէ ցեղ և միջավայրէ միջավայր : Բարոյականը իր անցեալին մէջ կը ներկայանայ մերթ իրրեւ տարրական և կոշտ ձգտումներ ու զգացումներ, մերթ իրրեւ բաղամասն և փափուկ հաւատալիքներ և գաղափարներ : Բարոյականին բուն վանդակութիւնը—բարի և չար, դեղեցիկ և սգեղ, առաքինութիւն և մոլութիւն—բարեչղական շարժման մը մէջ դնելով, նախ անգիտակից և անխորհրդածական զգացումներու և յօժարութիւններու հիւսուածք մ'են, որ յետոյ կրօնական և գրաւոր ձեւին տակ իրրեւ պատուէրներ և առածներ կը ներկայանան, և ապա գիտակցութեան ու խորհրդածութեան բորձրագոյն աստիճանին հասնելով, փիլիսոփայական և գիտական, հայեացքի երով կը համակարգուին՝ իրրեւ բարոյականի դրութիւններ և հայեցողութիւններ :

Մարդիկ ցորչափ բարձրագոյն բարիին կատարեալ ըմբռնումը չունէին, նոյնիսկ իրենց ամէնէն բարձր և ծաղկեալ կացութեան մէջ, և աստուածները բնական տարրերէ աւելի կը կրէին իրենց մէջ, կրօնը և բարոյականը առաւել կամ նուազ իրարմէ հեռացած կը մնային : Կրօնական զգացումը նախապէս եսասէր և բիրտ եղանակով մը արտայայտուած՝ օտար կը մնար բարոյական զգացումին : Իմաստուններու, մարգարէներու և յոյն փիլիսոփաներու հոգիին մէջ է միայն որ կրօնը իր բնութենական կոշտ ու նւթական տարրերէն զտուելով՝ բարոյականութեան պայծառ մակարդակի մը վրայ կը բարձրանայ : Մարդուն յարաբերութիւնները իր Աստուծոյն հետ բարոյական հանգամանք մը կը ստանան, հաւատքը՝ սրբութեամբ գեղեցկացած՝ այն սուրբ կապն է որ երկինքը երկրին կը միաւորէ : Կրօնային մեծաշուք արարողութիւն-

ները, ցուցադրական ուխտերը եւայլն՝ ա՛լ անգոր են եւ աննշանակ՝ յորմէհետէ կրօնական մարդը ընտելեան ազդեցութենէն կ'ազատագրուի, մտնելու համար հոգեկան կեանքին մէջ, կրօնն ու բարոյականը սահմանուած էին միշտ աւելի իրարու միանալու եւ տնքող ջովին իրար ընդգրկելու: «Բարձրագոյն բարեպաշտութիւնը իբրեւ իտէալ բարոյականութիւն երեւան կուգայ,» կ'ըսէ կրօնագէտ փիլիսոփայ մը: Բարձր կրօնքն ու բարձր բարոյականը երկու վերամբարձիկ գաղաթիւներ են, որոնք հոգեկան լուսափայլ բարձրութեան մը վրայ զիրար կ'ողջունեն:

Կրօնը չարտադրեր բարոյական օրէնքը, բայց իր գաղափարներովը կ'եղանակէ օրէնք եւ կը բացատրէ զայն: Առանց կրօնական իտէալի, բարոյականը տեգոյն եւ անհաստատ պիտի ըլլայ, զուրկ թէ՛ լոյսէ եւ թէ՛ զօրութենէ:

Տիեզերական կրօններու շրջանակին մէջ է որ գերազանցապէս բարոյականը կրօնական կեանքին կեդրոնը կը կազմէ: Ասոնց մէջ ալ անհրաժեշտ է զանազանութիւն մը դնել: Պոետապականութեան մէջ բարձրագոյն բարին՝ անհատին արտաքին աշխարհէն ունեցած անջատումն է, ամէն յարաբերութեան դադարումովը: Պոետապականութիւնը ամէն փիլիսոփայական դրութեան պէս՝ եսասիրական շեշտուած ձեւ մը ունի, ուր անձնաւորութիւնը փոխանակ մեղքերուն դէմ մաքառելու, աշխարհուրացութեան, ծոյլ հանգըստականութեան (quietisme) մէջ կը փնտռէ Նիրվանան, իր կենսական ոյժերուն յուշիկ սպառումն ու շիջումը:

Բրիստոնէութիւնը, ընդհակառակը, ամէնէն կատարեալ գաղափարը կը բերէ բարոյականի մասին, որուն առաջադրած գերագոյն բարին պէտք է որ իր նպատակով եւ պայմաններով իրականանայ աշխարհի վրայ, ձեռք բերելու համար բարոյական ու կրօնական երանութիւնը: Այդ բարոյական ազդեցութիւնն է որ քրիստոնեայ անձնաւորութեան յաւիտենական արժէք մը կուտայ, որով կրօնական եւ բարոյական հաւատքը ընդմիշտ եւ կատարեալապէս իրարու կը միանան Աւետարանով:

Բարոյականի զօրութիւնը սէրն է, որ միեւնոյն ատեն էական տարրը, նիւթը եւ ոգին կը կազմէ քրիստոնէութեան, որուն համար ճշմարիտ բարեպաշտութիւնները անոնք են, որ բարոյական դրոշմ մը կը կրեն իրենց վրայ: Յոյն բարոյագէտներու համար՝ փիլիսոփայութեան մէկ մասը կը կազմէր բարոյականը, եւ իմաստուններու ընտրեալ ու սակաւթիւ խումբի մը մենաշնորհն էր: Աւետարանը ժողովրդական ըրաւ զայն, եւ սուրբի գաղափարականովը փոխանակելով իմաստունի գաղափարականը՝ մատչելի դարձուց զայն սղաղէտներուն եւ խոնարհներուն:

Մարդուն բարոյականը, ուրեմն, սխալ հիման մը վրայ կը հանգչի երբ կը չիօթէ պարտականութեան իրողութիւնը (բարին), որ մի է, բարոյականի գիտութեան հետ՝ որ ալլաղան է բարքերու եւ կրօնքներու համեմատ, որուն առարկան է ո՛չ թէ ինչ որ պարտի ըլլալ բարին մարդու ճակատագրին եւ դերին յարաբերութեամբ, այլ ինչ որ է իրապէս ժամանակին բարոյականը՝ իր համաշխարհիկ եւ զանազան վիճակներուն մէջ, կամ՝ պարզ խօսքով, ո՛չ թէ բարին իտէալը որ անհասանելի կը մնայ, այլ իրագործուած բարին:

Կրօնքէն անջատուած բարոյականը անխտնափելիօրէն կը ջլատուի եւ կը տկարանայ, եւ կրօնք մը առանց բարոյականի, ամէնէն անբաղձալի բանն է մարդկութեան համար, որուն զգուանքը բարձր երգիծանքով մը արտայայտուած կը դնենք Յիսուսի աստուածային զայրոյթին մէջ, որով նա սուտ բարեպաշտութեան եւ կեղծաւորութեան մարմնացում եղող փարիսեցիներուն եւ դպիրներուն մինչեւ ոսկորներուն ծուծը կը խորամխէ իր սուր հեգնութեան յաւիտենական սլաքները: (Մատթ. ԻԳ.)

Ճշմարիտ գիտակցութիւնը իր մէջ կը միաւորէ կրօնքն ու բարոյականը: Մարդը կրօնական էակ մըն է, հոգեբանը պիտի ըսէ թէ կը ծայրատուի նա՝ եթէ իր կրօնական կարողութիւնը ջնջուի. հետեւաբար անհրաժեշտ է որ կրօնական զգացումները խոր եւ տպաւորիչ ազդեցութիւն մը ընեն իր բարոյական ընթացքին վրայ:

Մարդուն կարողութեանց ներդաշնակ
զարգացումն ու գործակցութիւնն է որ կը
կանգնէ իր հոգեկան անքակտելի տաճարը,
որուն սեղանին վրայ կրօնքն ու բարոյականը
համաշունչ բուրումով ու համընթաց վերա-
ցումով կը սպասարկեն:

Արմառ

ՄԵՍՐՈՊ ՎԱՐԴԱՊԵՏ

ՕՐԱԹԵՐԹԵՐԸ ծանուցին շաբթուո մէջ,
թէ Կովկասի, Խրիմի և Պետարապոյ 14 քա-
ղաքներու մէջ արդէն իսկ գործադրուեր է
գուս կառավարութեան հրատարակած 1903
մայիսի Օրէնքը որուն համեմատ՝ Հայ Եկե-
ղեցւոյ գոյքերուն, կալուածներուն ու դը-
րամներուն մասակարարութիւնը կ'անցնի
պատկանեալ նախարարութեանց ձեռքը:

ԾԱՆԵԱԿՆԵՐԸ

ՕՐ. Ա. Կ.ԻՆ

Փրփուրները վեկտեսումներ կը դիպեն,
Ծովուն անծիր մակարդակին վրայ լայն.
Փրփուրները կը ժանեակին յուլօրէն,
Ծով խտիղներ յօրինելով անըման:

Ծովուն անծիր մակարդակին վրայ լայն,
Կոհակները անփութօրէն կը ձիւնեն,
Ծով խտիղներ յօրինելով անըման,
Բիլ, ալեգոյն հպանցնելով օդեղէն:

Կոհակները անփութօրէն կը ձիւնեն,
Ինչպէս ամպի ժապաւեն մը խօլական,
Ու ալեգոյն հըպանցնելով օդեղէն,
Կը սարսըռայ, կը դողդըղայ ամեն ժամ:

Ինչպէս ամպի ժապաւեն մը խօլական,
Անըջանք խորհուրդներով հրեղէն,
Կը սարսըռայ, կը դողդըղայ ամեն ժամ,
Խուսափելով տառապանքի ուղիէն:

Անըջանք խորհուրդներով հրեղէն,
Փրփուրին պէս երգեր ունի սիրական,
Խուսափելով տառապանքի ուղիէն,
Ժանեակները կարծես միշտ ձիւն կը տեղան:

Փրփուրին պէս երգեր ունին սիրական,
Իդձերս՝ որոնք՝ տեսութիւններ կը ցօյեն,
Ժանեակները կարծես միշտ ձիւն կը տեղան,
Ինչպէս հոգիդ՝ որ համակ ձիւն է արդէն:

ՄԱՌԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Ի ՆԹ Է Ր Լ Ա Ք Ը Ն

Օպերլանտի գոհարը, ինթըրլաքըն, դրախտ մըն է ուր հոգիները կ'իտէանան, էն ինկածները, էն ձանձրացածները անգամ, դէպի սրբութիւն ձերմակ թռիչքի մը մէջ, որ վաղը նորէն պիտի թափի ակտաբոյր քաղքին վրայ:

Կեանքին տաղտուկներէն յոգնածները, մեղամաղձոտ հոգիները, կը վազեն բնութեան այդ հրաշագեղ ծոցը, իրենց պաշտամունքը խնկելու Եոնկֆրաուին՝ որուն սպիտակափառ ձակատը՝ մաքուր հոգիներուն պէս՝ երկինքին կը հպի: Համակ դիւթութիւն մըն է որ կը կախարդէ զբօսաշրջիկը, արքշրջանք մը՝ ուրկէ երջանիկ ցնորքի անուշ յիշատակ մը յաւիտենապէս կը ճերմկնայ տառապանքէն գունաթափած տխուր հոգիին մէջ:

Լիւշինի հովիտներուն խորէն, ուր մարգերը կը զմրուխտին և չոր խոտոտ անտառները կը խորաստուերին, Եոնկֆրաու, Ալբերու հովանին, ճերմակ կոյսն յաւէրժական, կ'արթննայ՝ ճեփճերմակ՝ արշալոյսին ճմութկած անրջաթոյր բնեզները թօթափելէն, և իր առաջին սրբութեամբը կ'օծէ բնութիւնը՝ զոր այնքան գեղեցիկ և հոյակապ կ'ընէ:

Կինն է պառկած յուլաբար, սպիտակ ու հողանի, որուն մաքուր ու անգայտ մերկութիւնը կը խորհրդանշէ ճերմակ զաղափարին յաւիտենականութիւնը, և կ'երազէ դէպի հրմայուած երկինքը անշուափ իտէալին սրբութիւնները:

Արդարեւ, իր անունին պէս՝ մանկամարդուհի, կարկառելով դէպի վեր իր փառաւոր ծիծերը բրդածէ՝ զոր անթօշ շուշաններ կաթոտած են, Եոնկֆրաու արեւին ճառագայթներուն տակ կը շողացնէ իր անհալ բաղմածալ ձիւներուն զանակաւոր արծաթութիւնը, հայելիացնելով իր ցայտուն ամենի կողերուն վրայ երկինքին կապոյտը և ամպերուն վաղկան:

Մշտնջենաւոր ու յաղթական՝ կինը, միշտ

գեղեցիկ և միշտ անմատոյց, անոր պէս ինքնավստահ ու սիրահար, փոխնիփոխ շլացուցիչ ու սգակայնող, պաշտելի ու վայրադ, Եոնկֆրաու արհամարհանքով կը նայի Լաութըրպրունընի և Կրինտըլվալտի հանդարտ ու ծիծղուն հովիտներուն վրայ, և դէպի երկինք բարձրանալու խորխոտ սլացքը ունի՝ իր ճերմակ բիւրեղեայ անշարժութեան մէջ, որուն դարերը երկիրպագած են և զոր ամպերը միայն կը համբուրեն:

Շուշանի փրփրայանգ բանաստեղծութիւն մը զոր արծիւները կ'երգեն, հրեշտակի թեւերէն թափթփած փետուրներու սատափեայ երազ՝ որ երբեք չանցնիր, կարծես երկնակամարէն կախուած դիւթահրաշ կաթնաթոյր ջահ մը՝ որուն մէջ կը բոցավառին արեւին պրիսմացած ճաճանչները, մարդերուն և սարերուն և պուրակներուն բիւրեղանգ զմռուխտներուն մէջ դրուադուած հսկայ աղամանդ մը՝ որուն մէջ հուրիները կը նային ժպտալից և ուրկէ երազներ կը փախչին:

Անցորդը այդ ամպերուն մէջ կարծես կը տեսնէ հոգին անոնց զոր սիրած էր և որ ա՛լ չիկան, ճերմակ մաքուր հոգին որ մահուան մէջէն կը նայի յաւիտենական սիրոյ նայուածքը վսեմ՝ Կեանքին ունայնութեան վրայ, ինչպէս անդունդներուն վրայ կը նայի լուսինը՝ թալկացած գիշերուան սարսափին մէջ:

Ո՛վ երջանկութիւնը այդ անհաւատալի դիւթանրկարին ուր երկինքը կապոյտ իր անհունութիւնը կը բիւրեղացնէ, ո՛վ վճիռ ու բարձր հոգիներուն ճախրանքը երգող թափանցիկ սլատկերը՝ որ յափշտակուած աչքերուն մէջէն կը պրիսմանայ, հուսկ սիրտին մէջ կը լուսանկարուի, ո՛վ կապոյտի և ճերմակի և կանանչի եղեմային քայէյտոսքորը՝ հրաշալի աչքերուն պէս զոր միշտ կ'որոնենք և զոր յաւիտեան պիտի պաշտէինք:

Այդ ճերմակ անրջանքին մէջէն ծլած մանիշակներուն և մարգրտածաղիկներուն մօտ, էտէլվայսը, Ալբերու անուշ ծաղիկը, ձիւներուն մէջ կը փթթի հոն, ինչպէս սէրը կը նոջ ձիւնէ սիրտին մէջ. սակայն այդ սուրբ ծաղիկը երբեք չի թուամիր, և կնոջ սէրը,

աւաղ, Ալբեան մանիշակի մը չափ հաղիւ կ'ապրի երբեմն :

Յաճախ անօտր ու թեթեւ մշուշ մը կը քողարկէ Եունիֆրաուն, կոյսի մը զգլխի մերկութիւնը չի պարտկող կիսաթափանց շղարչին նման՝ որ աւելի խորհրդաւոր կ'ընէ երկիրպագելի գեղեցկութիւնը :

Ու երբ արեւը չիգայ համբուրելու չըքապանծ ճակատը այդ վիթխարի լեռնակոյտին, զոր կ'ամբողջացնեն Մէօնիւր, Էկլըր և Վէօթըրհէօրնըրը, կանգնած խրոխտաբար Լիւչինի երկնակ հովիտներուն մէջէն, ամպերը վար կիջնան, ուրուականներու պէս, իր փաթթութիւն անոր ձիւնապատ կատարներուն և կը սայթաքին անոր լերկ ու ժայռոտ կողերն ի վար, նման երջանկութեան վայրկեաններուն մէջ—աւաղ, շատ կարծ և շատ վաղանցիկ—մեզ պարտուող խոնաւ սարսուռներուն, երբ արդէն մարած է սիրոյ տենդը և սիրտը կը պաղի յափրացումէն :

Ահաւոր է յայնժամ տեսիլը, և խորագրեցիկ մարդուս հոգին կը սոսկայ :

Ստուերները կը խուճապեն, ամպերը կը հալածեն անոնք, ու թիւդահրաշ տեսարան մը կը պարզուի ընտելեան որ կը գիրկընդխառնուի փոթորկի պայքարումին մէջ : Եունիֆրաուն ա'լ չերեւար, լեռան սիրահարն է. արեւը արդէն ուրիշ հորիզոններու կը վաղէ :

Որքան տափակ են մեր հոգիները, որքան ուժաթափ և խղճալի, քանզի որքան քիչ կը հասկնանք հսկայ երաժշտութիւնը լեռներուն, անդուսպ նլացքի և խորայունաց արհուիրքի նուագ մը, էն վայրենին զոր ընտելիւնը երգած ըլլայ երբեք. և սակայն մեծ յուզմունքներու սիրահար և բուռն տառապանքներէ վիրաւոր հոգիներուն համար ինչ գերազուանապէս սարսուղագրեցիկ ու նուաճող համերգութիւն, թաւալգլոր դահավիժումը սառնակոյտներու, ջրվէժներու վազքը դադանամուռնջ, ժայռերու ճաթուռքը ահեղատանջ, և ասոնց հետ—ո՛վ ելեւէջումը սրբազան խաղերուն՝ որոտումէն մինչև հա-

ղիւ լսելի հծծիւնը—ձիւնի զանակներուն մըրմունջը հեշտափուր, ջուրի երակներուն սարսուռը սրսիւն, բացուած ճեղքեր ու փափրսուքը հեղամրմունջ, և այս ամէնը յաւէրժապէս փչող հովին—փոխնիփոխ ջութակ եւ թաւջութակ—աներևոյթ ճպոտին ուժգնահարութեան համաչափ :

Ու, երբեմն ալ, խորին լուսութիւնը, մահուան վայրկեանը որ կ'աղօթէ : Ճաճար մըն է այլեւս այդ սրբավայրը՝ մարդերէն դեռ չի կոխտուած : Աստուած կը լուսապսակէ այդ վայրկեանը, եւ այդ աղօթքը իր սիրածն է :

Մարդ, ցնորքին մէջ տարուքեր, պահ մը կը բարձրանայ հոտ. իր հիւանդ հոգին ուսում մը կ'ունենայ դէպի անձանթթը, դէպի խոտայլ. հիւսնալի ժէպը մը կը գծուի այերին մէջ : Ա'հ, հեղհետէ, կը սրբանայ. հետը հետէ կ'օծուի իր ճակատը վսեմացումով մը : Իր կիթոտ ծունգերը վար կը ծռին՝ պաշտամունքի խանդով մը. իր աչքերը կը փնտռեն երկինքին մէջ Աստուածը որուն չի հաւտաց դրժող հոգին : Եւ աղօթքի այդ հեշտալի վայրկեանին մէջ յաւիտենութիւն մը կ'ապրի... :

Վերադարձին, զանգակները կը հնչեն լեռներուն մէջ, անտառներուն մէջ, ամէն տեղ, հաւատքը շինած է իր տաճարը : Յաղթական բարեպաշտութիւն : Քայլերը դէպի աղօթատեղին կ'ուղղուին : Աչքերուն մէջ արցունք մը կայ կարծես :

Բայց, երազացնոր անցորդը, խորհողը, կանգ կ'առնու վիճի մը եղբւր, սինիքօրէն կը նայի անոր պարապութեան մէջ ուր իր սառ մտածումը կը դահավիժի՝ ինչպէս քիչ մը առաջ սառնակոյտը : Հուսկ կ'անցնի ան մատուռին քովէն, անձկալից, վարանոտ, ու միայնակ. կը վերադառնայ դէպի քաղաք, անգամ մըն ալ դիտելով ետին՝ Եունիֆրաուն, կարծես ալեւոր ամհի ծերունի մը այլեւս, որ վերջալոյսին մէջէն վերջին անգամ կը նայի Լիւթըրլաքընի վրայ, Պրիէնցի ու Թունի մէջ—դոյզ մը պաշտելի աչքեր՝ որ երկինքին կը յառին անհուն հը-

մայքի մը մէջ դամուսած—վիտակելով իր ստուերամած պատկերը՝ որ կը քնանայ այդ կապոյտ ու կանանչ լիճերուն անրջանիւս սընդունին վրայ :

Խաղաղութիւն մը կը տարածուի իրերուն վրայ . և լուսինը՝ այդ ճերմակ լեռներուն վրայ, որպէս չիրիմներու մարմարին վրայ՝ մահէն ու գիշերէն աղօտած :

Բայց հոգիները, յուզուած և մեղամտղձիկ, կ'երազեն դէպի յաւիտենութիւն ձիւնեղէն համբոյր մը :

Ու ճերմակ գաղափար մը կը ձիւնէ սիրտին մէջ . . . :

Վ.Ա.ՀԱՆ. ՄԱՍԻՔԶԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՏԻՐԱՅՈՒ ԿԱՐԱՊԵՏ ՊԱՂՏԱՅԼԵԱՆ

Վեց ամիսէ ի վեր զինքը հազիւ ճանչցայ . ծերութիւնը զինքը տան մէջ արգելած էր ու փոքրիկ հիւանդութիւն մը վեց ամիսներ շարունակ զինքը անկողինին գամած : Խոնկ ծերունի մը դարձած էր . սպիտակ մորսւք մը իր կզակը դոցած . ճաղատ դլուխ մը միշտ բարձին վրայ կը հանգչէր : Անուշ ժպիտ մը երբեմն կենդանութիւն մը կուտար իր թարշամած դէմքին : Մինչև վերջ, գրեթէ իր մեռնելէն երկու օր առաջ, տակաւին մտքին կարողութիւնը պահած, անցեալէն բաներ մը կը յիշէր տեղն ի տեղօք, թուակոններով . ու հակառակ մօտ իննըսուն երկար ձմեռներ անցնելուն, տակաւին առանց ակնոցի լրագիր կը կարդար, զոր բարեւորարար իր մէկ աղջականը կը ղրկէր իրեն՝ կարդալու և վերադարձնելու պայմանաւ : Ուրբաթ գիշեր Տիրացու Կարապետ իր վերջը հասած մոմի մը պէս կը մարի, թողլով անուն մը նշանաւոր Դպրապետի որ գրեթէ կէս դարէն աւելի իր եկեղեցիին ծառայած ու իր ձայնին ելեւէջներով շատ մը տաճարներու կառարները թընդացուցած ու շարականներու եղանակները անվթար պահպանած է, հակառակ ձայնաբ-

րութիւն ուսած չըլլալուն ու նոյն իսկ անոր բարեկամ չըլլալուն : Այլ ևս իրեն չափ հին դպրապետ չկայ, բաց ի Սամաթիոյ Կարապետ Տ. Անդրէասեանէն որ իր ծերութեան հասակին մէջ այսօր գործէ քաշուած և հանգըստեան կոչուած է Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցիին Դպրաց Դասուն կողմէ :

Այսօր երբ Տիրացու Կարապետ Ա. Պաղատաբեան ոչ ևս է, կ'արժէ որ իբր հին դիբ մը ներկայացնենք իր կեանքին այս կամ այն իրողութիւնները որոնք գուցէ օգտակար ալ կրնան ըլլալ օր մը : Ծագումով Պաղտատցի է . իր մեծ պապը Մնացական անունով՝ որուն արհեստն է եղեր ոսկերիչ, Պաղտատէն գաղթելով Պոլիս կուգայ գրեթէ 1760ին եւ կը բնակի Սամաթիա : Մնացական տղայ մը կուսնենայ Թագւոր անունով 1788ին միջոցները և որովհետեւ բաւական հմտութիւն ունեցող մէկն է եղեր Մնացական, Սամաթիոյ Դպրաց Դասը կարգի կը դնէ ու իր ժամանակին համեմատ յարմարաւոր ուղղութիւն մը կուտայ : Սամաթիոյ մէջ երկար առին չմնար ու Կէտիկ-Փաշա կը փոխադրուի . շուկային քիչ մը աւելի մօտ ըլլալու դիտաւորութեամբ, Հոն իր տղան՝ Թագւորը՝ կ'ամուսնացնէ, որուն երկու զաւակ կը ծնի, Առաքել և Յովսէփ անուններով : Յովսէփ ամուսնանալէն յետոյ սարկաւազ կը ձեռնադրուի՝ քահանայութեան կոչուելու համար, և սակայն կը հրաժարի ու դարձեալ աշխարհական կը մնայ . թէ պատճառը ի՞նչ կրնայ եղած ըլլալ՝ որոշ բան մը չկայ այս մասին : Առաքել ալ հաւանաբար քսանընիւթ տարեկան ամուսնացած ըլլալով 1815ին մանչ զաւակ մը կուսնենայ որուն անունը Մնացական կը դնէ : Մնացական 1830ին երբ 13—14 տարեկան էր, Մայր վարժարան յաճախել կը սկսի և կ'աշակերտի Թէրզեան Ստեփան վարժապետին, որ երաժիշտ ալ էր : Երեք տարի շարունակ դպրոց կ'երթայ Մնացական ու իր ժամանակին ուսումը՝ որ Սաղմոս, Նարեկ ևն . կարդալէն անդին չէր անցներ, կ'ամբողջացնէ : 1833ին Կէտիկ-Փաշայ օդէն դժգոհ և հիւանդութեան մը հետեւանքով կը գաղթեն Պալատ, ուր Մինէճի Յովհաննէսի կ'աշակեր-

տի երաժշտութիւնն ուսանելու համար. աշակերտութեան այս շրջանը կը տեւէ եօթը տարի՝ մինչեւ 1840. բայց միեւնոյն ատեն դործնական կեանքի հետեւող մը կ'ըլլայ և կը պարտապի դերձակութեամբ: Աստուածատուր Պատրիարք տիրացու Մնացականին դպրութեան աստիճան կը չնորհէ Ս. Հրեշտակապետ եկեղեցիին մէջ. և անկէց վերջ Սալմաթումբուքի վարժարանին պատուելի կ'ըլլայ՝ Կիւմիւշեան Մկրտիչ Էփ.ին հետ: Թերեւս երկու այս աշխատաւորները զիրար շատ կը սիրեն եղեր, ուստի և միեւնոյն մարդուն անունով յիշուելու համար Մնացական իր անունը կը փոխէ և կ'ըլլայ Կարապետ: Սալմաթումբուքի վարժարանին մէջ պաշտօնի կը կոչուի 1845ին, բայց յայտնի չէ թէ քանի՛ տարի կը վարէ այդ պաշտօնը, և 1846ին Պալաթի դպրոցին երաժիշտ—վարժապետը կ'ըլլայ և երաժշտապետութեան պաշտօնը կը շարունակէ Ս. Հրեշտակապետի մէջ, պաշտօն զոր կը վարէ մինչև 1856ի օգոստոս ամիսը, և կը թողու զայն, երբ 1856 յուլիս 28ին Արքածի—Պագալի հրդեհին ժամանակ ամէն բան կ'այրի, թաղ, դպրոց և եկեղեցի միանգամայն: 1858ին կը սկսի երկար ճամբորդութեան մը. նախ նոյն տարին իբր ուխտաւոր Ս. Էջմիածին կ'երթայ և քանի մը ամիս հոն մնալէ վերջ՝ կ'այցելէ Վան, Վարազ, Բաղէշ, Մուշ, Ս. Կարապետ, Կարին, Բաքերդ, Սեբաստիա, Սամսոն և ապա Պոլիս կը դառնայ 1859ին: Ամէն տեղ իբր նշանաւոր երաժիշտ պէտք եղած յարգն ու պատիւը կը վայելէ Կարապետ աղա ու բոլոր իր այցելած եկեղեցիներուն մէջ իր թրթռուն ձայնին ելեւէջներով կը թնդացնէ տաճարներուն փառազարդ դրմբէթները:

Առաջուրնէ արդէն ծանօթացած էր Պալեան Կարապետ ամիրային հետ, որուն բնակարանին մէջ 1856ի հրդեհէն յետոյ, իրեւ անպատասպար մէկը ժամանակ մը կը մնայ և Տիրացու Համբարձում Չէրչեանի հետ՝ կարծեմ թէ առաջին անգամ ըլլալով՝ եկեղեցական շարականները ձայնադրելու կը սկսին, իրենց օգնական ունենալով Մանուէլեան Յակոբիկ աղան՝ իբրև շարականագէտ՝ Կարապետ աղա

բնական էր որ այս տեսակ աշխատութեան մը կանչուէր, ու Պապա Համբարձում իբրև ձայնադրագէտ անոր օգնութեան կարօտէր, անվթար պահուած շարական մը ձայնադրեալ ունենալու համար, թէպէտ սա յետոյ շատ անգամներ փոփոխած է կամահաճ յաւելումներով և իր ճաշակին յարմարցնելով շատ տեղեր: Կարապետ ամիրային հետ ունեցած իր սերտ բարեկամութիւնը երկար կը տեւէ, այնպէս որ 1859 յուլիս 2ին երկրորդ անգամ ըլլալով Մատթէոս կաթողիկոսին հետ Էջմիածին երթալէն և վերադառնալէն յետոյ 1860ին Երուսաղէմ կ'ուղեւորի իբրև ուխտաւոր, ուր երեքուկէս տարի կը մնայ իբրև ուսուցիչ և իրեն կ'աշակերտին Հմայեակ եպիսկ. Դիմաքսեան՝ նոյն ատեն սարկաւազ, Իփէքճեան Յովհաննէս վարդապետ, տիրացու Բարսեղ և այլն:

Շատ երկար չշարունակեր Կարապետ աղա իր պաշտօնը Երուսաղէմի մէջ և 1840ին կը վերադառնայ Պոլիս և Պալաթի մէջ երաժիշտ կ'ըլլայ մինչև 1867. այդ թուականին, երջանաւորապէս Գէորգ Կաթողիկոսի հրաւերով Էջմիածին կ'ուղեւորի ուր կը մնայ մինչև 1872. այդ ժամանակամիջոցին Թաճեանին հետ միասին կը ձայնադրեն բոլոր շարականները, զորս Հայրապետը հրատարակել կուտայ. այդ աշխատութեան մէջ մասնաւոր բաժին մըն ալ ունի Վահրամ Մանկունի Սըրբազանը: 1872ին Պոլիս կը վերադառնայ եւ 1875ին դարձեալ կը տեսնենք զինքը Ս. Էջմիածին նուիրական տաճարին մէջ երաժշտապետութեան պաշտօնին կոչուած: Կարապետ աղային պաշտօնավարութեան միջոցին Պապումեան Մկրտիչ եպիսկոպոս՝ հին գաղափարներով եւ քիչ մըն ալ հակառակութեան ոգիով լեցուած՝ բաւական ընդդիմութիւն կ'ընէ եւ նոյն իսկ աշակերտները գրգռելու չի խղճահարիր ուսուցչին դէմ. բայց աշակերտները չեն աղդուիր ու դարձեալ կը շարունակեն իրենց հլութիւնը եւ կը հետեւին դասաւանդութեանց: Իր աշակերտներէն շատեր վարդապետ եւ եպիսկոպոս կ'ըլլան: 1875էն մինչև 1882 իր դպրապետութեան պաշտօնը կը շարունակէ հոն ու Գէորգ

Կաթողիկոսի մահուան առթիւ կը թողու-
վերջնականապէս Էջմիածինը եւ կը դառնայ
Պոլիս ու Պալատի եկեղեցիին դպրապետը
կ'ըլլայ: Այս դպրապետութեան պաշտօնը
պահեց մինչեւ իր մահը, որ տեղի ունեցաւ
հոկտ. Յի ուրբաթ գիշերը: Պալատի թաղը
որ կը պարծի իր դպրաց դասով, անշուշտ
չատ բան կը պարտի Տիրացու Կարապետին,
եւ այդ Դասը կազմող երիտասարդները ու
պատանիները մինչեւ վերջ յարգանքի բաժին
մը պահեցին անոր նկատմամբ ու զինքը ե-
րեսի վրայ չի ձգելու համար շարունակ տաս-
ներեօթը տարիներ ամսական վճարած են. իր
հիւանդութեան միջոցին այդ ամսականը
փոքրիկ յաւելում մըն ալ կրեց, վասն զի
բժշկական ծախքերը նոյն իսկ Դպրաց Դասը
կը հոգար սիրայօժար կերպով: Եւ երբ մե-
ռաւ, նոյն այդ Դպրաց Դասը բնաւ չթերա-
ցաւ իր պարտականութեան մէջ եւ հարկ
եղած յարգանքը ընծայեց անոր յիշատակին,
որ զիտցաւ ամէնէն աւելի երգել Ս. Հրեշ-
տակապետի կամարներուն տակ, շրջապատ-
ուած շարական սորվելու փափաքով լեցուած
աշակերտներէ:

Ս. Պատրիարք Հայրը, եկեղեցիին համար
աշխատող այդ մարդուն արժանիքին բար-
ձրացումին եւ յիշատակին փառաւորման հա-
մար անձամբ նախադահեց թաղման արարու-
թեան (*) եւ գեղեցիկ դամբանականով
մի վեր հանեց անոր կատարած գործը, որ
գիտցած էր իր ճիւղին մէջ սուշինը ըլլալ:
Արդարեւ, Տիրացու Կարապետ Ա. Պաղ-
տատեան յաջողած էր շարականագէտներուն
մէջ առաջինը ըլլալ եւ իրր հեղինակութիւն
միշտ յարգ ու պատիւ վայելել ամենուրեք,
Էջմիածնէն սկսեալ երուսաղէմ եւ Պոլիս:
Իրմէն օգտուած են Պապա Համբարձում եւ
Թաճեան, որոնք բոլոր շարականները ձայ-
նագրած են. սուշիինը տակաւին անտիպ,
որ կարծես բնաւ լոյս չպիտի տեսնէ, իսկ

երկրորդինը արդէն դործածութեան մէջ է
Էջմիածին:

Շարականները ձայնագրած է նաեւ Պոլ-
սեցի Տ. Վահան քհ. Դրիգորեան, որ այ-
սօր շարականագէտներուն մէջ կրնանք ըսել
թէ առաջին տեղը կը բռնէ ու իր պատկա-
նած թաղին դպրոցներուն կանոնաւորութեան
եւ շարական ուսուցանելու համար ոչ նուազ
աշխատած է. նոյն իսկ կ'ըսեն թէ երբեմն
հակառակութեան ալ բաղխած է Տիրացու
Կարապետին կողմէ, վասն զի սա ձայնա-
գրութեան սիրահար չըլլալով, չէր ուզեր որ
շարականները ձայնագրուէին, այլ բերանացի
սորվէին աշակերտները: Այս տեսակետով,
սակայն, Տիրացու Կարապետ յայտնի է թէ
չատ օգտակար եղած չկրնար ըլլալ, եւ
նոյն իսկ, ինչպէս կը հաւաստեն, սորվեցնելու
մէջ քիչ մըն ալ ժլատ է եղած: Իր բնաւ-
րութիւնը խիստ էր, եւ գուցէ ամուրիու-
թեան հետեւանքով, վասն զի չէր ա-
մուսնացած. իսկ իր վարուելակերպը բաւա-
կան անհանդուրժելի, թէպէտ ծերութեան
տարին՝ մեղմացած, հանդարտած գորովա-
գութ աչքերով կը նայէր իր աշակերտներուն,
որոնք իրենց այցելութեամբը քաջալերանք
մը կուտային իրեն: Իր մարդկային թերու-
թիւններովը հանդերձ՝ կը թողու անիկա լա-
ւագոյն անուն մը, իր արուեստին մէջ
վարպետ կոչուելու չափ իրաւցնէ վարպետ,
որով գիտցաւ երկար տարիներ երգել շարա-
կանները եւ հոգեկան զուարթութեամբ լեց-
ուիլ եւ լեցնել ունկնդիր հաւատացեալներու
բազմութիւնը՝ որ հոգիի զեղումներ կը
փնտռէ կրօնային երգերու եւ շարականներու
քաղցրանուագ երգեցողութեանց եւ հրեշտա-
կային սրբասացութեանց ու աշխուհներուն
մէջ:

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

ՅՈՒՇԵՔ ԶԱՅՆԵՐ



Զայներ կ'երգեն սրբիս մէջ,
Տարսամ, ժպտուն կամ միսքիբ...
Համանը ազ մ'ուր անվերջ՝
Կը յիշուին Կիցն ու Երկիցն:

(*) Թաղման աղարողութեան ներկայ էին
նաեւ Տ. Վահրամ Արքեպիս. եւ Տ. Հմայեակ
Եպիսկ., Տ. Տիրայր եւ Արարդեան Վրդ. ները
եւ Պոլսոյ բոլոր եկեղեցիներուն դպիրներ եւ
դպրապետ—ուսուցիչները:

Անարձագանգ խուսափուկ
Կը բեւաժին անոնք գիրգ
Յուսեի ձայներ, — ինչպէս խուցկի՝
Բարձրանալով սրլացիկ.

Լքուած՝ բեւ մըսերիմ
Անոյ՞ ինչպէս մեղեդին
Ձից՝ ինչպէս բոցն երերին —

Ես կը սիրեմ անձկագին
Տրոփուն երգելն անոնց՝ իմ
Բոլոր սեքերս անցեալին:

Մ. ՌԵՂԻՍԵԱՆ

ՎՈՍՓՈՐԵԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Քիւրէճ-Պոնոնի, 7 Հոկտեմբեր
Երեւոյն

Վասիորը կ'ամայանայ ու Բերան կ'ողբերուի. աշնան թեթեւ ցուրտ մը, անձրեւով խառն, կը փութացնէ դիւղագնացներու վերջին խումբերը դէպ ի քաղաք. և անոնք որ առկառն կը յամառին մնալ այս ծովեզրերուն մօտ, կամ «աշխարհիկ ձկնորսներ» են, amateurներ, որոնք սալօնի միօրինակ կեանքէն նախամեծար կը համարին ալեկոծ կեանքը նաւակի մը, թէ և հաղիւ համարձակին մինչեւ Գալաքի բացերը մղել դայն, կամ մեռնափոխներ՝ ինծի պէս՝ որոնք կղզիացած ապրելու, ամբոխէն ու աղմուկէն հեռու մնալու հաճոյքը կ'ուզեն ըմբռնել հնար եղածին չափ երկար ատեն: Այս ճաշակաւ արդելք մը չէ, սակայն, որ չի հետեւում գէթ լրագրական աղմուկներուն, վէճերուն, որոնց է՛ն հանդարտ միջոցին իսկ՝ լեզուականը կայ ու կը մնայ միշտ, փոյթ չէ թէ քիչեր ըլլան անով հետաքրքրուողները ու շատեր՝ տաղուկացողները: Գրողներ ունինք որոնք, ձեռնհաս լեզուագէտներուն հրապարակէ առժամապէս մեկուսացած պահուն, կը կատարեն այն դերը որ բեմի վրայ վերապահուած է fi-gurantին՝ բուն արուեստագէտներուն դադար կամ հանգիստ առած պահուն. միջնարարին

տեղողութիւնը զգալի ընել չի տալու համար՝ բան մը ձեւացնել կամ մուտալ, թէ և ունկընդիրներ չի գտնէ իր առջև: Այս տըպաւորութիւնը թողուց վրաս երկարապատում չարքը լեզուաբանական pot-pourri մը զոր Բօքի թարգմանիչը նորէն կը հրահանէ մեզի, այս անգամ Բագրատունիին անունովը շքաւորուող սրահներու մէջ: Բայց, չունենալով ձեռնհասութիւն խօսելու նիւթի մը վրայ որ բազմակողմանի հմտութիւն կը պահանջէ և առանց որու հրապարակ նետուիլը ծայրայեղ յաւակնոտութիւն պիտի ըլլար, — առաքինութիւն մը որով օժտուած չեմ՝ Գր. Մալխասին պէս. — կը բաւականանամ արձանագրել տեսակցութիւն մը զոր ունեցայ երէկ Վասիորի շողենաւին մէջ, ուր կը գտնուէի դիպուածով:

Սալօնին մէջ կ'ընդնշմարեմ Տիար Տիգրան Ելքէնճեանը, ինքն ալ աշխատակից մը Մասիսին, որուն քով կ'երթամ նստիլ՝ փոխանակելով առտուան բարեւը: Մէջերնիս խօսակցութիւն տեղի չունենար դեռ. երիտասարդ գրաբարագէտը ձեռքը բռնած է Շաբաթաթերթ մը որուն ընթերցումով կը զբաղի, մինչ ես զբաղած եմ... սիկառուս: Կը դիտեմ որ բարեկամս, յօդուածի մը ընթերցման պահուն, տողընդմէջ կը ժպտի, քիչ նշմարելի կերպով: Հետաքրքրութիւն մը կ'արթննայ ներսս, շարժառիթը գիտնալու. բայց կը զգուշանամ իր ընթերցումը ընդհատելէ: Պահ մը կը շարունակենք այսպէս: Կուգայ սակայն վայրկեան մը ուր ժպիտը աւելի՛ նշմարելի կ'ըլլայ, և ես որ մօտէն դիտեմ թէ Ելքէնճեան դիւրաւ ժպտող մէկը չէ, մանաւանդ ընթերցումի պահուն, կը փորձուի հետաքրքրութիւնս յագեցնել և կը հարցնեմ իրեն՝ խնդուքին պատճառը:

Կը ցուցնէ ինծի Պ. Մալխասի երկար յօդուածը և կ'ըսէ.

«—Այս Պարոնը երկու շաբաթէ ի վեր բաներ մը կը խօսի Հ. Արսէն Բագրատունիին իրեն նիւթ ընտրած: Ապահովապէս ինք է՛ն անյարմար անձն է այս գործին համար: Կը յիշեմ թէ դեռ վերջերս Մասիսի մէջ ինք իր բերնով պարծենցած էր գրաբար չգիտնալուն

համար : Զարմանալի չէ՞ որ հիմայ Ոսկեդարը ,
Բազրատունին , Վենետիկը , Վիէննան իրար
կ'անցընէ : Բայց և այնպէս , ի սէր արդարու-
թեան պէտք է խոստովանիլ թէ յօդուածա-
գիրը իր փոքրիկ մէկ արդարացումը ունի .
վանդի , թէպէտ դուրսէն այնպէս կ'երեւայ
որ քննական ու քննադատական ուսումնա-
սիրութիւն մը պիտի ներկայացնէ մեզ , բայց
յօդուածին ընթացքին մէջ երեւան կուգայ
թէ անիկայ ո՛չ նպատակ ունի ո՛չ ալ կարո-
ղութիւն այդպիսի գործի մը , այլ միայն . . .
ուրիշներու քաբի՞ պիտի ընէ թէ ինչպէ՞ս
քննել և քննադատել պէտք է Բազրատու-
նին» :

Կը հարցնեմ բարեկամիս , թէ երկու շա-
բաթուան յօդուածներուն մէջ չիկա՞ր քննա-
կան ուսումնասիրութիւն մը :

«—Ո՛չ , կը պատասխանէ , այդպիսի բան
չիկայ : Յօդուածագիրը ինքնիրմէն բան մը
չգիտեր որ ըսէ և ուրիշներէն կը սպասէ .
ինչպէս ըսի , քաբի՞քներ և պատուիրանքներ
ունի . «քննելո՛ւ է , ուսումնասիրելո՛ւ է , ի
վե՛ր հանելու է» կը կրկնէ , և ասոնց կատա-
րումը ուրիշներու կը թողու» :

—Ի՞նչ բան աւելի պատճառ եղաւ Զեր
խնդուքին :

«—Սա պարագան : Յօդուածագիրը տեղ
մը ճարտարատոյժ յանդիմանութիւն մը կ'ընէ
Հ. Գրիգորիս Գալէմքեարեանի . և յանդի-
մանութեան պատճառը սա է : Վիէննական
ներհուն Միխիթարեանը թէ՛ Հանգես Ամսօր-
եայի մէջ և թէ՛ առանձին տետրակով խօ-
սած էր Ոսկեդարու գրաբարին ու Բազրա-
տունիի վրայ . և այս վերջինին վրայ խօսած
միջոցին՝ անոր երկասիրութեանց մէկ ցանկը
գրած էր , չարելով անոնց անունները : Բայց
մեր յօդուածագիրը այս օրերս կը ըսէ ասկէ
անկէ , թէ Բազրատունի թարգմանած է ե-
ղեր «նաև ուրիշ շատ հեղինակներէ՛» որոնց
անունաց յիշատակութիւնը կը պակսի Հ. Գ.
Գալէմքեարեանի լիակատար ցանկին մէջ» :
Եւ այս հեղինակներուն անունները թուելով
կ'ըսէ . «Հոն (ցանկին մէջ) չգտայ ո՛չ Սոփոկ-
լէս , ո՛չ Տիմոսթէնէս , ո՛չ Ռասին և Վօլթէռ ,
ո՛չ Ալփիէրի և Փոսկոլա» : Մարդուկը չի

գիտեր թէ Ռասինի , Վօլթէռի , Սոփոկլի և
Ալփիէրիի թարգմանութիւնները՝ ամէնքը
միասին՝ կը կազմեն ճաշակէ հիմ եւ Յոր Ող-
բեղութեանց հատորը որ կ'երեւի Հ. Գալէմ-
քեարեանի ցանկին մէջ . իսկ Դիմոսթէնէս կը
գտնուի ճաշակ հեյլեն եւ յաթիմ ճարտա-
խօսութեան հատորին մէջ՝ որ նմանապէս յիշ-
ուած է Վերապատուելի վարդապետին ցան-
կին մէջ : Եւ մեր յօդուածագիրը , այսպէս իր
աչքին տակ ունենալով հանգերձ Ռասինը ,
Վօլթէռը , Սոփոկլը և Ալփիէրին՝ ակնարկեալ
ցանկին մէջ , դեռ կը փնտռէ դանոնք ու չի
գտներ , կամ Պիրէոնի նաւահանգիստին մէջ
խարխիս նետած՝ չորս կողմը կը հարցնէ թէ
ո՛ւր է Պիրէոն : Ասոնցմէ զսա , Փոսկոլոն
ալ փնտռելու ետեւէ է ու զայն ալ չի գտնու
ցանկին մէջ , մինչդեռ Հ. Գալէմքեարեան
այդ ալ յիշած է իր ցանկին մէջ՝ Հոկոն Փոս-
կոլոյ անուամբ . սակայն գրահմուտ յօդուա-
ծագիրը կարծելով թէ Հոկոն և Փոսկոլոյ
տարբեր հեղինակներ են , Հոկոնէն զատ
Փոսկոլոյ մըն ալ փնտռելու վրայ է : Ասոնք
գոնէ փոքրիկ ժպիտի մը արժանի չի՞ն . . .» :

Ելքէնճեանի այս ուշադրաւ յայտնութիւն-
ներէն տպաւորուած՝ կը հարցնեմ իրեն թէ
ուրիշ ի՞նչ կայ ճահեկան յօդուածին մէջ :

«—Շահեկան ոչինչ կայ , կը պատասխանէ
գրաբարագէտ բարեկամ . չան միմիայն քանի
մը մտային անել թափառումներ , անկապան-
յարիւր խօսքեր , կոտորտականքներ . նաեւ ասկէ
չորս հինգ ամիս առաջ հրատարակուած գրական
յօդուածի մը մէկ հատուածին սխալ և կիսատ
ընդօրինակութիւնը՝ ասկէ իմաստի այլայլում
և սխալ հետեւութիւններ հանելու նպատա-
կաւ մէջ բերուած» :

Խօսակցիս անցողաբար ըրած այս հա-
տու գիտողութիւնները մտիկ ըրած պահուս ,
մտքիս առջև կը բերէի իր խորունկ հմուտ-
թիւնը գրաբարի և անոր հակառակ՝ իր հա-
մեստութիւնը , որով պատկառանքով բերանը
կամ գրչին ծայրը կ'առնէ Բազրատունիին
անունը , երբ առիթը ներկայանայ կարծիք մը
յայտնելու Հոմերոսի թարգմանչին վրայ ,
մինչդեռ Մալլան մը՝ առանց թերեւս ո՛չ
իսկ պարզ ընթերցում մը կատարած ըլլալու

Բագրատունիի ամբողջական գործերուն, — թողո՛ւնք հասկնալ և ուսումնասիրելը, — այդ հոյակապ անձնաւորութիւնը դատելու կ'ելլէ, աջէն ձախէն լսած արձագանգներուն հետեւելով . . .

Այս երեւոյթը ժպիտ մը կ'արժէր եղեր արդարեւ, արդահատանքի ժպիտ մը:

ՄԵՆԱՍԷՐ

ԽՄԱԳՐԱԿԱՆ ՆՈՐԵՐ

ԿԱՅՍ. ՇՆՈՐՀ

Խմբագրութիւնս խորին երախտագիտութեամբ կը ծանուցանէ թէ Վեհ. Սուլթանը բարեհաճած է Դ. Կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհել Մասիսի արածնապէր Կարապետ էֆ. Իւթիւճեանի:

Կայսերական այս շնորհը որուն կ'արժանանայ Պոլսահայ լրագրագետներուն երիցագոյնը, նոր հաւաստիք մըն է այն բարձր ու լուսամիտ հովանիին զոր Ն. Կ. Վեհափառութիւնը կը շնորհէ Մամլոյ զարգացման ու յառաջդիմութեան:

Մասիս, որ իր գոյութեան յիստներեք տարիներուն մեծագոյն ու բարգաւաճ մասը բոլորած է ու կը բոլորէ ընդ հովանեաւ Ն. Կ. Վեհափառութեան, իր արտօնաաիրոջ և հետեւաբար թերթին ալ եղած այն պատուին առթիւ իր շնորհապարտ զգացմանց հաւատիքը կը մատուցանէ յոտս Կայս. Դահլիյի, ջերմագին բարեմաղթութիւններով վասն արեւշատութեան Ն. Կ. Վեհափառութեան:

Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսը, որ Ատանայէն Տարսոն գացած էր, սեպտ. 26ին Մէրսին հասեր է ուր պիտի մնայ երկու շաբաթի չափ:

Պատուանցան. — Դ. Կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհուած է Սուրհանդակ լըրագրի գլխաւոր խմբագիր Արիկ էֆ. Մուպահհեանի:

Բարբոյ կեծ. Թեյեան, Կեդր. Վարչութեան բանագնացն ու պատուիրակը երուսաղեմի Ս. Պատրիարքին մօտ՝ միաբանու-

թեան մէջ ծալած ծանօթ խնդիրներուն կարգադրութիւնը և դժուարութեանց հարթումը դիւրացնելու նպատակաւ, երէկ մեկնեցաւ մայրաքաղաքէս Մէսածրքիի նուցկի-Ձե շոգենաւով: Տարակոյս չունինք որ Պատրիարքարանի վարչական դիւանի տեսուչը իր ծանօթ ուղղամտութեամբը ու փորձառութեամբը յաջողապէս ի գլուխ պիտի հանէ իրեն յանձնուած փափուկ պաշտօնը, ընդհանուր գոհունակութիւն առթող եզրակացութիւն մը առաջ բերելով Կեդր. Վարչութեան ու Երուսաղեմի Պատրիարքութեան միջև ծագած թիւրիմացութեանց մասին որոնց վրայ իր վերջին բառը ըսաւ արդէն Տ. Յարութիւն Ս. Պատրիարքը՝ Կեդր. Վարչութեան ուղղած իր վերջին երկու պաշտօնագիրներով զորս Ս. Պատրիարքը Ներկայեց Սառն ժողովոյ չորեքշաբթի օրուան նիստին: Այդ նամակներէն վերջինին մէջ, որ սեպտ. 25 թուականը կը կրէ, Երուսաղեմի ալեղարդ Պատրիարքը՝ յիշելէ ետքը այն անուղի ամբասանութիւններն ու զրպարտութիւնները զորս Միտրանութեան անդամներէն ոմանք անհատաբար կամ հաւաքաբար կ'ընեն Ելեւմտից Տեսուչ Տ. Դեռնդ վարդապետի դէմ, բացորոշապէս կը յայտարարէ թէ «Այդ զրպարտութիւնք եւ առարկութիւնք անպիտուութեան եւ թշնամութեան արդիւնք են, եւ ոչ այլինչ: Տ. Դեռնդ Վրդ. ի արժանիքը, ուղղութիւնը եւ կարողութիւնը ամենուստ, եւ նոյն իսկ մրցակից վանքերէն եւ հաստատութիւններէն անդամ, ինչպէս նաեւ Պետութենէն եւ պետական մեծ ու փոքր պաշտօնատարներէն ճանչցուած եւ զնահատուած ըլլալով, պատիւ բերած է Միաբանութեան եւ Աղգին. Իսկ մեզ համար մասնաւորապէս, մեր Պատրիարքութենէն առաջ եւ մեր Պատրիարքութեան շըրջանին մէջ, միշտ զօրավիգն ու միխթարութիւնն եղած է իր անձնուիրութեամբ եւ յամառ աշխատութեամբ: Յաւօք սրտի կը յաւելումք թէ տակաւին չենք կրցած իրեն որեւէ վարձատրութիւն ընել, ո՛չ նիւթապէս եւ ո՛չ բարոյապէս»:

ԼԻԼԻԵՆ ՄՕՐՐԻՍ

6.

(LILLIAN MORRIS)

Գրեց ՀԷՆՐԻԺ ՍԷՆՔԻԷՎԻԶ.

Թարգմ. ԶԻՅԹԷ-ՍԱՐԱՅ.

Եւ ատոր պատուական սպացոյցը աչքիս առջեւն էր. դէմս՝ մարգագետինը կը տարածուէր զէնքերուն շաշխնովը լեցուած, ուր իմ մասիս. գիշերները ձիու վրայ անցընելու և արիւննուշտ կարմրամորթներու հետ կըռուելու հեռապատկերը կար, տակաւին երկար ատենի համար, և հոտ, նոյն այդ նայուածքիս տակ կը փուռէր պաշտեցեալիս հանդարտ նինջը այնչափ առլի վստահութիւնով ու հաւատքով, որ մէկ խօսքիս վրայ հանդարտած, ա'լ չէր խորհեր հաւանական յարձակումին և նետերու սպառնալիքին տակ կը հանգչէր այնչափ խաղաղօրէն որչափ իր հայրենի երդիքին տակ:

Արտաքին այդ վտանգները ու անմեղունակ այդ նինջը իրարու բաղդատելով է որ, առաջին անգամ զգացի, թէ որչափ ծանծրալի կըսկսէր ըլլալ ինձ համար, արկածալից ու առանց վաղօրդայնի նոյգ կեանքս և համոզուեցայ որ հանդիստ ու գոհունակութիւն պիտի չունենայի մինչև որ այդ պաշտելի արարածին կեանքը չի բաժնի ինծի հետ:

— Ի՞նչ մը Քալիֆօրնիս հասնէի՞նք, կը մըտածէի: Բայց ճամբուն կէսը, և ան ալ զիւրին մասը գացինք դեռ. և ահա արդէն իսկ խոնջէնքը կը սկսի դրոշմուիլ այդ դալկատիւ դէմքին վրայ: Ե՞րբ արդեօք պիտի հասնինք մեծածոխ ու զմայլելի այն երկիրը՝ որ մեղի կըսպասէ. ե՞րբ պիտի ոտք դնենք իր բարերար երկինքին տակ և պիտի չըջապատուած զգանք ինքզինքնիս իր յաւիտեանական գարունովը:

Լիլիէնի ոտքերը ծածկեցի գոմէշի մորթով մը, արշալոյսին զովութենէն պատասպարելու համար զայն և անոյց գացի, բանակետդին անդին ծայրը:

Թեթեւ մշուշ մը կը բարձրանար գետին երկու եզերքներուն վրայ որմէ թերեւ Հընդիկները ուղէին օգուտ քաղել, փորձելու

համար իրենց յարձակումը: Խորոյները հետըզհետէ կը մարմնէին ու կը տոգունէին: Ժամ մը ետքը, երկու հոգի հինգ մէթր հեռուէն իրար չէին տեսնար: Հրաման ըրի պահնորդներուն որ վայրկեանը անգամ մը բերանով իրարու ձայն տան: Եւ շատ չանցած ընդհանուր լուութիւնը կը ծակէին միայն սա երկարածիգ աղաղակները, «Կարգին է, ամէն բան կարգին է», որոնք մաղթանքի մը բառերուն պէս բերնէ բերան կը պտղտէին:

Բայց հնդկական բանակետողը կատարեալապէս հանդարտած էր և իրենց պատերազմիկները լռած էին: Ատիկա ա'լ աւելի կը վերդովէր զիս: Լոյսը ճղքուած ատեն անհուն ծանծրոյթ մը ու խոնջէնք մը տիրեցին մեր մէջ: Աստուած միայն գիտէ թէ մարդերուս մեծ մասը ասանկ քանի՞ քանի՞ գիշերներ անքուն էր անցուցած: Եւ մշուշը, ցուրտ ու աղգեցիկ, ծայրայեղօրէն կսկծալի սառսուռներով կը ցնցէր մեզի:

Այս պարագաներուն մէջ աւելի աղէկ չէ՞ր, անմիջապէս յարձակիլ Հնդկներուն վրայ և ցիրուցան ընել զանոնք, քան թէ սպասել որ անոնք յարձակին մեր վրայ: Այս գաղափարը արկածախնդիր բնաւորութեանս արդիւնքը չէր միայն, այլ իբր բացարձակ հարկ մը կը ներկայանար միտքիս: Յանդուգն ու բարեբաղդ յարձակում մը փառքով պիտի ծածկէր մեզի և անոր լուրը վայրենի ցեղերուն մէջ տարածուելով, երկար ատեն պիտի պաշտպանէր մեզի, ըլլալիք նոր փորձերու դէմ:

Հարիւր երեսուն հոգի ետիս ձգեցի, մարգագետնի վաղեմի դաւալներէն, վարպետորդի Սմիթին հրամանատարութեանը տակ. մնացած հարիւրին հրամայեցի ձի հեծնալ և բանակետողէն դուրս ելանք մեծ զգուշութիւններով, բայց ուրախ՝ վերջապէս շարժում ընել կարենալնուս համար, որովհետեւ ցուրտը

հետգհետէ կը պատէր մեզի և հիմա գէթ պիտի կարենայինք տաքնալ: Գնդակի մը հասողութեանը կրկինն չափ տեղ, ազադակներ արձակելով քառասմբակ արշաւեցինք և պատուգաւոր մեր հրացաններուն զնդակներուն ետեւէն, վայրենիներուն վրայ խոյացանք ուրականի մը պէս: Մեր կողմէն, ձախաւեր հրացանաձիգի մը արձակած մէկ զնդակը սուլեց անցաւ ականջիս քովէն և դլխարկս ծակեց:

Բայց արդէն իսկ իր կած էինք Հնդկիններուն վրայ որոնք ամէն բանի կրնային սպասել, բայց յարձակումի մը՝ բնաւ երբեք: Յիւրաւի, երբեք չէր եղած որ գաղթականները նախադարձակ ըլլան, տափաստանի այս հէներուն վրայ: Սարսափը այն աստիճան կուրցուց զանոնք որ, սկսան ամէն կողմէն փախչիլ խելայեղ, վայրի գազաններու պէս մըռնջիւններ արձակելով և առանց ընդդիմութեան ցիրուցան ըլլալով: Այդ թշուառներէն պզտիկ խմբակ մը որ դէպ ի գետին կողմը քշուած և նահանջի գիծը կտրած էր, այնքան յամառօրէն պաշտպանեց ինքզինքը որ վերջապէս նախամեծար համարեց ջուրը նետուիլ քան թէ անձնատուր ըլլալ:

Իշայծեամի եղջիւրներով վերջաւորուած նետերը ու կայծքարէ տապաւնները շատ մեծ վնաս մը չէին հասցնել մեզի, թէև մեծ վարպետութիւնով կը գործածէին զանոնք: Ակնութարթի մը մէջ երկուքի ճեղքեցինք իրենց զանգուածը: Անոնցմէ մէկը, խիզախ անըզգամ մը, գերի բռնեցի և որուն հետ գլուխ ելլելու համար, հարկադրուեցայ թեւերը կտորտել: Քանի մը երկվեցեակ ձի գրաւեցինք, բայց այնչափ վայրենի էին անոնք ու այնչափ յոռեբարոյ որ անկարելի եղաւ մեզ գործածել զանոնք: Մէկ քանի հատ ալ գերի բռնեցինք, ամէնքն ալ վիրաւոր: Հրաման ըրի խնամել զանոնք, և Լիլիէնի խնդրանքին վրայ ազատ արձակեցի, անոնց բաժնել տալով միեւնոյն ատեն, վերմակ, գէնք, ձի և ինչ որ պէտք է, ճակատամարտի մը մէջ անյաջող ելած զժգաղճներու: Խեղճ մարդիկը համոզուած ըլլալով որ զիրենք պիտի կապէինք տանջանքի գերանին, արդէն սկսեց

էին մահուան իրենց միօրինակ երգը երգել և իրենց աչքերուն կ'երեւար տակաւին սարսափը այն բռնն յարձակումին զոր ըրած էինք իրենց վրայ: Այն ատեն կարծեցին որ դիտմամբ ազատ կ'արձակէինք կոր զիրենք, վերջէն հնդկական եղանակով իրենց ետեւէն իյնալու և սպաննելու համար. բայց տեսնալով որ, որ և է վտանգ չէր սպառնար իրենց կեանքին, ելան գացին, «Դալիանար ծաղիկին» բարութիւնը ու վեհանձնութիւնը փառաւորելով: Բնազդումով այդ անունը տուած էին Լիլիէնին:

Բայց օրերնիս վերջացաւ տխուր պատահարով մը որ կուգար մահատուներ քող մը ձգել մեր այն ուրախութեան վրայ, զոր կ'իմանայինք մեր յաղթանակին ու անոր կարեւոր արդիւնքներուն պատճառով: Մեր մարդերէն ոչ մէկը մեռած էր. մինակ մէկ քանինք աւելի կամ պակաս ծանրապէս վիրաւորուած էին, որոնց մէջ էր նաև Հէնրի Մէմփսըն որ իր ծայրայեղ յանդգնութեանը պատճառով շատ առաջացած էր կռիւին մէջ: Իրիկուան հոգեւարք էր և ուզեց զիս տեսնալ խոստովանելու համար. բայց խեղճ ընկերակիցս ա'լ անկարող էր խօսելու, որովհետև տապարի հարուածով մը ծնօտը ջախջախուած էր: Հազիւ կրցաւ մրմնջել. «Ներեցէ՛ք, մեծաւոր». և ոգեւարի ջղաձգութիւնները զգայաղիւրկ ըրին զայն: Գուշակեցի ինչ որ կ'ուզէր հասկցնել ինծի. յիշեցի այն զնդակը որ առտուն ականջիս քովէն սուլեց անցաւ և ներեցի իրեն բոլոր սիրտովս, որովհետև բարի քրիստոնեայ մըն եմ: Գիտէի որ մէկտեղ գերեզման կը տանէր Լիլիէնի համար ունեցած խորունկ՝ բայց չի խոստովանուած սէրը և ենթադրեցի որ դիտումով մահուան ընդառաջ գացած էր:

Կէս գիշերին մեռաւ: Թաղեցինք զայն ահագին բամպակենիի մը տակ որուն կեղեւին վրայ դանակիս ծայրովը խաչ մը փորագրեցի:

Յ.

Հետեւեալ օրը ճամբայ ինկանք նորէն: Մեր առջին կը տարածուէր անհուն, բայց առաջիններէն աւելի տափակ, աւելի վայրենի մարդագետին մը՝ որուն յըջագաւառ

ներուն մէջ ճերմակները դեռ նոր սկսած էին ոտք դնել այն ատեն։ Նէպրասքաի մէջ էինք։

Առջի օրերը, առանց ծառի տարածութիւններու մէջէն արագօրէն առաջացանք։ Բայց դժուարութիւնները կը սկսէին խուժել ամէն կողմէն, մանաւանդ վառելանիւթ զրտնալու դժուարութիւնը։ Իրաւ է որ, այդ անսահման տափաստաններուն մէջէն անցնող Բլաթ Բիւլըրի եղերքները ողորումներով (Oseraie) և ուռնիներով ծածկուած էին։ Բայց շատ խոր չըլլալուն, դետը յորդա՝ էր, ինչպէս կ'ըլլայ ամէն գարունին, և մենք մեր փայտի պաշարը երթալ գտնալու ու բերելու համար, կատարեալ ճամբորդութիւններ ընելու կը պարտաւորուէինք շատ անգամ։ Եւ եղաւ ատեն մըն ալ ուր կրակ չիւնելու համար չունէինք ուրիշ բան, բայց եթէ գոմէշի թրիք, որ աղէկ մը չորցած չըլլալով արեւին տակ, պզտիկ բոց մը և ահալին մուխ մը միայն կը հանէր։ Որով կ'աճապարէինք ժամ առաջ Կրանտ Բիւլիէր Պլէօ հասնելու, ուր գէթ փայտ գտնալնուս ապահով էինք։

Մեզ չըջապատող երկիրը տակաւին կը պահէր իր վայրենի տեսքը։ Կտրաւանին առջեւէն, որ հիմա ծուռումուռ գիծով մը կերկարաձգուէր, ատեն ատեն, կարմիր ստեւով ու ճերմակ փորով յամոյրներու խմբակներ կը սրանային։ Անոնցմէ վերջը, ատեն ատեն ալ, բարձրադէզ խոտերուն մէջէն, գոլորչի դուրս տուող ու արիւնոտ աչքերով գոմէշներու խոշոր խուռացած գլուխներ կը ցցուէին դուրս և կը տեսնայինք անոնց բազմաթիւ խումբերուն շարժելովը ու մարգագետինն վրայ անհուն սև արատներու պէս ուրուադժուիլը։

Լեռնակներէ կազմուած կատարեալ բաւիղներու մէջէ անցանք։ Նախ որեւէ Հնդկի հետքը չերեաց, և քանի մը օր ալ անցնելէն ետքն էր որ գլուխնին դոյնդոյն փետուրներով պճնուած, երեք վայրենի ձիաւորներ նշմարեցինք հեռուէն, բայց շատ չանցած՝ ուրուականներու պէս անյայտ եղան գացին։ Այն ատեն բնակտնաբար խորհեցայ որ, Միսուրիի մօտ անոնց տուած դասերնիս, չըջակայ ցեղերուն մէջ, ահազդեցիկ հանգամանք

մը տուած էր Մեծն Ռալֆի անունին, և դերիններուն հանդէպ մեր ցոյց տուած վեհանձնութիւնը հրապուրած էր այդ նախնական ու քինախնդիր մարդիկը՝ որոնք սակայն ասպետական զգացումներէ բոլորովին զուրկ չէին։

Երբոր Կրանտ Բիւլիէր Պլէօի զով ուստուերախիտ եղերքներուն վրայ հասանք, որոշեցի տասը օր հանդիստ տալ կարաւանին։ Ըամբորդութեան մնացած կէսը մինչև հիմակուանէն շատ աւելի դժուար էր, որովհետև մարգագետինն ետին կը բարձրանային Ապաուս Լեռները և աւելի հեռուն Ութահի ու Նիվատաի «Վատ Հողերը»։ Մեր ձիերը ու ջրիները նիհարցած էին և հակառակ առաջ անունդի մը, ակներև խոնջէնքի մը նշանները ցոյց կուտային։ Քիչ մը աւելի երկարատև կայք մը պէտք էր որ կազդուրուէին։ Այդ նպատակով է որ Կրանտ Բիւլիէր Պլէօի և Դրիք տէ Կասթօրի կազմած եռանկէսին մէջը կանգ առինք։

Ամուր դիրք մը ունէր ան, դետին երկու կողմերովը պաշտպանուած և որուն երրորդ կողմը վակոններուն գիծովը գոցած էինք։ ջուրը ու փայտը կը վխտային ամէն կողմ։ Ասոց չնորհիւ աշխատութիւննիս մեծապէս պակսած էր։ հսկողութիւնը զիւրին էր և գաղթականները ուղածնուն պէս կրնային անցընել իրենց ժամանակը։ Հող անցուցած օրերնիս, մեր ճամբորդութեան լաւագոյն օրերը եղան միեւնոյն ատեն։ Օդը հրաշալի էր միշտ և գիշերները այնչափ տաք սկսած էին ըլլալ որ կրնայինք բացօթեայ պառկել։

Մեր մարդիկը առտուն որսի կ'երթային և կէս օրին կը վերադառնային բազմաթիւ յամոյրներով ու մարգագետինի թռչուններով՝ որոնք մեր շուրջը հազարներով կը վխտային։ Օրուան մնացած մասը կ'անցընէին ուտելով, խմելով, երգելով, քնանալով կամ դարձնելով վայրի սաղեր՝ որոնցմէ բազմաթիւ խմբակներ կը ձախրէին ու կը դարձեալ արձէն մեր գլուխին վերև։

Կիանքիս մէջ չեմ ունեցած երբեք աւելի երջանիկ օրեր քան հանդիստի այն տասը օրերը զորս անցուցի Բիւլիէր Պլէօի մօտ։ Անտուրնէ մինչև իրիկուն Լիլիէնի հետ էի, և

մեր մէջ լայնցող մտերմութիւնը օրէ օր աւելի կը համոզէր զիս որ պիտի սիրէի զայն յաւիտեան: Հետզհետէ աւելի սերտ կերպով ու խորապէս կը կապուէի իրեն: Դիշերը փոխանակ միւս ընկերակիցներուն պէս քնանալու, կը խորհէի իր անցեալին, իր տառապանքներուն, ապագայի հոգերուն ու վիշտերուն վրայ և կը զգայի որ ան նոյնիսկ չնչած օգէս աւելի անհրաժեշտ պէտք մըն էր դարձած ա'լ իմ կեանքիս համար: Ի՞նչ լայն զմայլումով է որ կը դիտէի իր աղուոր գէմքը, իր ոսկեղօծ մազերը, մեր գլուխներուն վրայ կամարացող երկինքին չափ կապոյտ իր աչքերը, իր թարմածիւ մարմինին վայելագեղ ու քանդակակերպ գիծը, և իր դէմքին անմեղունակ արտայայտութիւնը՝ որ ըսել կ'ուզէր կարծես. «Պահէ, պաշտպանէ՛» զիս միշտ. առանց քեզի ճամբաս պիտի կորսնցընեմ աշխարհիս վրայ»: Իր վրայ ամէն բան հաճելի էր ինծի, նոյն իսկ զինքը պատող շրջազգեստը. իր դիւթանքը անդիմադրելի կ'երեւար ինծի. բայց, իր քաղցրաշնորհութենէն ու զգայունութենէն հրապուրուած էի, ամէն բանէ աւելի, և այն աստիճան՝ որ անկարելի էր բառերով բացատրել:

Կեանքիս մէջ չատ կիներու հանդիպած էի, բայց անոնց ոչ մէկը կը նմանէր անոր և աւանդ, բացարձակ համոզուած եմ որ, ա'լ հանդիպելիք ալ չունիմ: Անհուն կսկիծ մը կը պատէ հագին, երբ միտքս կուգայ ան: Լիլիէնի հոգին աղբուռող էր այնչափ որչափ այն ծաղիկը՝ որ անմիջապէս կը գոցէ իր թերթերը, երբոր մէկը մօտենայ իրեն: Ծայրայեղօրէն զգայուն, նոյն իսկ ամէնէն նրբազգած յոյզերը իւրացնելու մշտապատրաստ՝ ջերմ եռամառով մտիկ կ'ընէր խօսքերուն, սիրով կը թափանցէր ըսածիս և ամէն մէկ մտածումս կ'անդրադարձնէր, ինչպէս հանդարտ ջուրի մը մակերեսը կ'անդրադարձնէ իր վերեւէն անցած ամէն բան:

Միեւնոյն ատեն, այս հրեշտակային սիրտը այնչափ մեծ վախով անձատուր կ'ըլլար զինքը համակող սիրոյ զգացումին որ իրեն նրկատմամբ տածած գորովանքիս մէջ քիչ մը կարեկցութիւն կը գտնայի: Եւ սիրտիս մէջ

ամէն բան երախտագիտութեան կը փոխուէր: Ան՝ ինծի համար աշխարհիս երեսը, եղական, ամենասիրելի արարածն էր ալ: Իր ամօթխածութիւնը այն աստիճան մեծ էր որ անընդհատ կ'աշխատէի համոզել զինքը որ սիրելը մեղք չէ և մինչև իրիկուն գլուխս կը ճաթեցնէի, ատիկա իրեն հաւատացնելու ճարմը գտնալու համար: Այսպէս բազմադան ըզգայութիւններու մէջ արագօրէն անցաւ ժամանակը այդ փերեուն վրայ, մինչև այն օրը որ վերջապէս երջանիկ փափաքներուն պիտի հասնէի:

Առտու մը կանուխ, պտոյտ մը ընելու գացինք Գոլիք տէ Գասթօր ըսուած տեղը. կ'ուզէի Լիլիէնի ցոյց տալ հնարամիտ այդ կենդանիները որոնցմէ ամբողջ ազգաբնակութիւն մը կ'աճէր կը բազմանար մեր իջեւ անէն կէս մղոն անդին: Կարճ դնացքէ մը ետքը, անարգել հոն հասանք: Հոն կը տարածուէր տեսակ մը ծովածոց կամ լիճ՝ որուն եզրը Ամերիկեան երկու ընկուզենիներ կը բարձրանային: Ջրախորշին (crique) մակերեսէն քիչ մը աւելի բարձր թումբ մը կը զսպէր անոր կոհակները եւ հանդարտ ջուրին մէջէն, ջրշուններու (castor) կիսադեղձեւ բնակարանները միայն կը ցցուէին դուրս:

Ապահովաբար առաջին անգամն էր որ մարդկային ոտք մը կը կոխէր, ամէն կողմէն ծռուերով շրջապատուած այս խաղաղիկ անկիւնը: Կամացուկ մը մէկը ըրինք ուռնիի ոստերը եւ սկսանք զիտել ջրատոյզ այդ քաղաքը: Ջրշունները տակաւին սկսած չէին գործի. քաղաքը կը քնանար ամբողջովին եւ լճակին վրայ անանկ լուծիւն մը կը փրէր որ կը լսէի Լիլիէնի շնչառութիւնը, երբ անդին քշուած սազարթներուն մէջէն երկուքնուս գլուխը մէկ կը ծռէր եւ քունքերնիս իրար կը քսուէին գրեթէ: Թեւս անցուցած էի իր մէջքին, վար իյնալու ամէն հաւանաւ կանութեան առաջը առած ըլլալու համար եւ հոտ այդպէս կը սպասէինք համբերութիւնով, յափտակուած այն թարմ շրջանակէն՝ որ մեր աչքերուն առջեւ կը փոխուէր:

(Շարունակելի)

Արսօնաք Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն ԱՐԵՆՍԻՔ Օրագրի



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքրադով արտօնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿեԱՆՔի վրայ, եւ ՀՐԴԵՂ, ՓՈԽԱՐՈՒԹԻՒՆՔ ՎՏԱՆԴՆԵՐՈՒ, ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԷՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵՆԱԴՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԷՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿԵՄՐՈՒԵԼՈՆ ԴԷՄ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած
Երաշխաւորութեան գումար աւելի քան

10,666,667 Փրանք
137,300,000 »

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-
գլուխ եւ վնասուց հատուցում

282,000,000 »
54,000,000 »

1902 տարւոյ մէջ գանձուած ապահովագին եւ տուրոս

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան խան, Վոյվոտա, Ղալաթիա, — եւ Ղալաթիոյ Գործակալութեան, Էսկի Կէօմրիւք խան, Քարափին վրայ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻՋԱԿ

Վարժարանիս նպատակն է տալ միջնակարգ, հիմնական կրթութիւն մը, հետեւելով Անգլիական ու Ամերիկեան նոյնօրինակ Հաստատութիւններու (High School) ծրագրին: Նոյն ատեն ալ, սակայն, նկատի առնելով երկրին պահանջները՝ մասնաւոր խնամք կը տարուի տոհմային ու Պետական լեզուներու եւ գրականութեան, ինչպէս նաեւ Ֆրանսերէնի: Ամենէն պզտիկ կարգերէն սկսելով՝ կարգ մը դասեր կ'աւանդուին անգլիերէն լեզուով, որպէս զի բոլոր աշակերտները կանուխէն ընտելանան Անգլիերէնի: Տնօրէնը Տօքթ. Չէյմպլըրս կ'աւանդէ տոմարակալութեան դասը, որ մասնաւորապէս կը յարմարի է ընթացաւարտները գործնական կեանքի: Առողջապահութեան դասը կ'աւանդէ վարժարանին բժիշկը որ միանգամայն մոտէն կը հսկէ բոլոր աշակերտներուն առողջութեանը վրայ: Գիտական ճիւղերու դասախօսութիւններն արգիւնաւորելու համար՝ վարժարանը ունի պիտանի ու աւհրաժեյտ գործիքներու ընտիր հաւաքածոյ մը: Նորակառոյց նպատակայարմար չէնքը եւ նորաստաց ընդարձակ հողերը՝ ամէն ժամանակէ աւելի նպաստաւոր են աշակերտներու հան-

գըստութեան եւ առողջութեան, գեղը ըլլալով արդէն հանրածանօթ՝ իր մաքուր օդով ու գեղեցիկ տեսարաններով:

Վարժարանիս վերաբացումը (24րդ տարեշրջան) տեղի պիտի ունենայ Սեպտեմբեր երեքին (Ն. Տ.): Տարեթոշակն է 16 օմ. ոսկի: Աւելի մանրամասն տեղեկութիւններու համար դիմել անձամբ՝ Պայպըլ-Հասուզ, Կ. Պոլիս, կամ նամակով Տնօրէնութեան, Պարտիզակ:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԿԵՂՐ. ԳՐԱՏԱՆ

Ձախմոքերու թիւ 64

ԸՆԹԱՅՔ ԸՆԹԵՐՑ:—ԴՊՐՈՑԻ ԴԻՐՔԸ, Հրատարակուեցաւ Տարր. Ընթ. Բ. տարին, ճօխ պատկերներով ու բազմազան նիւթերով՝ հեղ. Չ. էֆ. Թրոսեանի. գին 4 դր. Դպրոցի պատ. Տնօրէնք օրինակ մը ձրի կը ստանան, 50 փարայ բօսթի ծախք զրկելով: Ուղղակի Դրատան դիմողներուն կարելուր զեղչ մը տուի:

Վ. Յ. Յակոբեան Անգղ-Հայ Բառգիրքը որ սպառելու վրայ է, միմիայն յիշեալ գրասուցը կը գտնուի. ուր դիմելու են պէտք ունեցողները:—գին 80 դր:

Ամեն վճարում կ'անխիլ է:

Յ ՈՒՇԱՏԵՏՐ

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

1904 ՏԱՐԻՈՅ ՀԱՄԱՐ

(AGENDA INTERNATIONAL)

Թուրքերէն, Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն լեզուներով
Յառաջիկայ 1904 տարւոյ համար նախորդ տարիներէն աւելի ճոխ եւ աւելի
խնամով պատրաստուած եւ արդէն հրատարակուած է

Պարզ լարակազմ	3	դր.	{ 25 օրինակէն աւելի գնող- ներուն գոնացուցիչ գեղջ
Ընթիւ լարակազմ	5	»	
ՈՍԿԵԶՕՄ ՓԱՌԱԿԱԶՄ	8	»	

Կը գտնուի Պոլսոյ եւ գաւառաց բոլոր գրավաճառներու եւ քղրա-
վաճառներու ֆով: Հրատարակիչն է

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ, ՊԱՅՊԼ ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

Յ ՈՒՇԱՏԵՏՐ

1904

34 X 15 սանթիմէր մեծութեամբ՝
ՍԵՂԱՆԻ ՅՈՒՇԱՏԵՏՐ. Թուրքերէն,
Հայերէն, Ֆրանսերէն եւ Յունարէն
լեզուներով

Յուշատետրին սկիզբը աւելցուած են
կարգ մը կարեւոր անգղեկութիւններ սրբ
անհրաժեշտ են ամէն գործի մարդոց:

Ընթիւ եւ գեղեցիկ լարակազմ

Գին 3 դր.

Կը գտնուի Կ. Պոլսոյ եւ գաւառաց բո-
լոր Գրավաճառներու եւ Թղթաւաճառ-
ներու քով:

Հրատարակիչ

Յ. ՄԱՏԹԵՈՍԵԱՆ

ՊԱՅՊԼ-ՀԱՌԻԶ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆ

Թ. 20 Զօմմաքերտար, Կ. Պոլիս

Ամենաճոխ մթերք դպրոցական, գրական,
գիտական եւ այլ գրեանց.

ՊԱԼԵՆՑ ԳՐԱՏՈՒՆԸ ներկայ դպրոցական
չըջանի առթիւ պատիւ ունի յայտարարել իր
բազմաթիւ յաճախորդաց թէ ունի հարկ եղած
անհրաժեշտ գիրքութիւններ՝ գրեական ամէն
յաճախարարութիւն գոհացուցիչ պայմաննե-
րով կատարելու, ըստ որում իբր գրավա-
ճառական մեծ հաստատութիւն մը արտադ-
րած է վերջին տասր տարիներու մէջ դրպ-
րոցական նորանոր դասագրքերու շարք մը
եւ այսպէս հիմնական բարեփոխումներ տե-
ւածած է մեր կրթակ-ն հին մեթոտներուն
մէջ:


Զերմապէս կը հրաւիրուին Պոլսոյ եւ գա-
ւառաց կրթական վարիչ մարմինները՝ փու-
թով յաճախարարել իրենց դասագրքերն, ի
նկատ առնելով գրատոմս ընծայած առաւե-
լութիւններն եւ ամէն բացառիկ պայմաններն:

Սոյն հանրածանոթ շաքարավաճառը՝ Բերայի շիտակ ճամբան, թիւ 54, իր խանութը ընդարձակած ու ճոխացուցած է, թէ՛ իբրեւ Բաթիստոյի եւ թէ՛ իբրեւ շաքարավաճառ, աւելի գոհ ձգելու համար իր բազմաթիւ յաճախորդները: Ամբողջ եղանակին մէջ, համեղ պաղպաղակներու պէտքերուն ինչ մը կայ ցորեկ եւ գիշեր:

ՀԱՅԻ ՍԱՐԻՄ ՕՍՄ. շաքարագործը ճոխ մթերք մը ունի հարսանեկան շաքարեղէններու, ընտիր տեսակէ, ու մասնաւորապէս յանձն կ'առնէ հարսանեկան հանդէսներու առթիւ ոչ միայն անոնց հայթայթումը՝ այլ նաեւ մատուցումը եւ սպասարկութիւնը տուներու մէջ:

Միակ մասնաճիւղ, Ղալաթիա. Թօփճըլար Ճատտէսի, Թ. 101:

17--30



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը սեննեայ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է: Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

ՍԻՆԿԷՐ

ՀԱՅԹԱՅԹԻԶ ԿԱՅՍ. ՊԱՂԱՍԱՆ

The Singer Manufacturing Cie.

Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՔԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍՆԱԳՈՐԾՆԵՐ

ԲԵՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մառչէի դէմ, Թ. 343 եւ 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱԼԱԹԱ.

1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին դէմ.

ՊԱԼԱ.

1. Սուլթան Համամ, Թ.
2. Սուլթան Պէյաղլա, Թրամվէյի կայարանին դէմ, Թ. 13.

ՍԱԻԻՏԱՐ

Չարըը Պօյու, Թ. 120.

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կասաբեալ Երաւաւորութիւն:

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:

Սինկէրի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թ. 343 եւ 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզդուլուի տունը:

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՃԻԷՆ

ԿԱՅՄ. ԹԱԴ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱԿԱԼ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ. ԳՈՒՔՍ ԼՈՒՐ ՏԵ ՊԱՎԻԹ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. ԸճԿ. ընդդէմ հրդեհի (Ի ՔԱՐԹԱՉԷՆ)

ԱԼԼԵԱՆՑԱ

Շովային ապահովագր. ԸճԿ. (Ի ՃԵՆՈՎԱ)

Սոյն ընկերութեանց Դրամատունն է Ի Կ. Պոլիս, Քոնսթ Լիօնե
Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հանօբուլօ խան, Թ. 52-53-54-55-56

ՆՈՐԱԳՈՅՆ

ԵՒ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾԵԱԼ

Փարիզեան ղեղեցիկ տպագրութեամբ
հրատարակուած

ՄԵԾ ԲԱՌԱՐԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ԳԱՂԻԵՐԷՆ--ՀԱՅԵՐԷՆ

Գ. ՆԱՐ-ՊԷՅԻ

Դին երկու հատորին միասին դահկ. 120

Վաճառման կեդրոնացեալին է

ԲԻԻԶԱՆԴԵԱՆ ԳՐԱՏՈՒՆԸ

Ղալաթիա Սեղբոս խան Թիւ 5

ՌՈՊԷՐԴ ՔՈԼԷՃ

Վարժարանիս յառաջիկայ տարեշրջանը
պիտի սկսի Սեպտ. 2/15: Կարգադրութիւն.
ներ եղած են նոր դիւրութիւններ տալու
վաճառականական ուսմանց համար: Մնայուն
բժիշկ մը՝ աշակերտներու առողջութեան,
մարմնամարզներուն ու խաղերուն, ինչպէս
նաեւ վարժարանին ընդհանուր առողջապա.
հական վիճակին վրայ կը հակէ: Նախորդ
տարուընէ սկսեալ բացուած է նաեւ փոքր
տղոց յատկացեալ նոր շէնքը, ուր կ'ընդուն-
ուին մինչեւ տասը տարեկան աշակերտներ:

12-12

Կ. Յ. ՏԵՐԵՍԷՆՉԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

ՍԱՄՍՈՆ

Կը ստանձնէ վաճառականական պիտոյից,
սպագրական գործերու պատրաստութեան
հոգը.

Գին ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

Մաքուր եւ արագ գործօնեութիւն.

Արժէք կանխիկ. 5% զեղչ.

Մանօթ վաճառականաց, ապառիկ.

Առաջին փորձը կը վստահեցնէ ձեզ ամէն
մասամբ:

Մանրամասնութեանց համար դիմել

Կ. Յ. ՏԵՐԵՍԷՆՉԵԱՆ

ՍԱՄՍՈՆ

ՀԱՄԱԶԴԱՅԻՆ ՕՐԱՅՈՅՅ ՀԱՆՐԱԳԻՏԱ.

ԿԱՆ, 1904 տարւոյ.—Գ. Պաղտատարեանի
սոյն ընդարձակ Օրացոյցը որ երկարամեայ
կանոնաւոր հրատարակութեամբ ծանօթ է,
յառաջիկայ տարուան համար ի լոյս ընծայ-
ուած է ճոխ բովանդակութեամբ մը որ ամէն
կարգի ընթերցողներու համար օգտակար ու
չահեկան կը դարձնէ զայն: Դին 3 շրշ, Հը-
րատարակուած է նաեւ համառօտը, Վա-
ճառման կեդրոնացեալի Յ. Մատթէոսեան
Թղթավաճառանոցը, Կ. Պոլիս: